AZG NEW PDF.qxd 22/03/2010 23:34 Page 1

Ազգ
Azg
23 ՄԱՐՏ 2010 ԵՐԵՔՇԱԲԹԻ 50 (4431)
ISSN: 1829-1651

# Գերմանացի մեկնաբանը հիշեցնում է այն, ինչ մոռանում է թուրք նախարարը

**Բեռլինում անցկացվող տուրիզմի միջազգային ամենամյա ցուցահանդեսին, որ 2010-ին կայացավ մարտի 10-14-ը, հյուր երկիրը Թուրքիան էր: Գերմանական «Ֆրանկֆուրտեր ալգեմայնե ցայթունգը», ներկայացնելով Թուրքիայի զբոսաշրջության եւ մշակույթի նախարար Գյունայի՝ այդ առթիվ Բեռլինում ունեցած ելույթը, ի թիվս այլ դիտարկումների ուշադրություն է հրավիրում Աղթամարի Ս. Խաչ եկեղեցու վերականգնման մասին նախարարի հիշատակմանը: Թուրքական կառավարությունը սա որպես օրինակ է միշտ հրամցնում այն ժամանակ, երբ թուրք-հայկական մերձեցման գործընթացի բարի կամքն է ուզում ցուցադրել, գրում է թերթի մեկնաբանը՝ իր ընթերցողներին հիշեցնելով այն, ինչ նախարարն այդպես էլ չի հիշատակել՝ թանգարանի բացման ժամանակ քրիստոնեական ժամերգություն չի մատուցվել, նաեւ այն, որ վերականգնված եկեղեցին գմբեթին խաչ չունի, որովհետեւ թուրքերն ասում են, թե երբեք խաչ չի ունեցել: Բայց կան լուսանկարներ, որ հակառակն են փաստում, գրում է «Ֆրանկֆուրտեր ալգեմայնե ցայթունգը»:**

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գերմանիա

# Հայ-սիրիական հարաբերությունները պետք է զարգանան երկու ժողովուրդների ձգտումներին համապատասխան

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Դամասկոս, Սիրիա



Երեկ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը տիկնոջ՝ Ռիտա Սարգսյանի հետ Սիրիայի Արաբական Հանրապետության նախագահ Բաշար Ալ Ասադի հրավերով ժամանեց Դամասկոս: Մանրամասներ դեռ կպատմենք, ուղղակի ներկայացնենք երկու նախագահների ելույթները առաձնազրույցից, ընդլայնված կազմով հանդիպումից եւ մամուլի ասուլիսից:

«Հայաստանը բարձր է գնահատում եւ մեծապես կարեւորում է Սիրիայի հետ հարաբերությունները», ասաց Հայաստանի նախագահը, նշելով, որ նախագահ Ասադի հետ քննարկեցին բազմաբնույթ՝ տնտեսական, մշակութային, գիտատեխնիկական հարցեր, ինչպես նաեւ փոխանակեցին կարծիքներ եւ հստակեցրին միմյանց դիրքորոշումները տարածաշրջանային եւ միջազգային մի շարք խնդիրների վերաբերյալ: Նախագահ Սարգսյանն ասաց, որ կողմերի միջեւ միմյանց դիրքորոշումների հանդեպ փոխըմբռնման պատրաստակամություն կա: Հայ-սիրիական համագործակցության վերաբերյալ տաս փաստաթուղթ է ստորագրվել երեկ՝ էներգետիկայի, սպորտի, մշակույթի, գյուղատնտեսության եւ այլ ոլորտներին վերաբերող: Առեւտրատնտեսական հարաբերությունները խթանելու համար դեռ լուրջ քայլեր են անհրաժեշտ՝ սա ընդգծեցին երկու նախագահները. «Սիրիան առավել, քան որեւէ այլ երկիր, տեղյակ է Հայաստանի պատմության ամենածանր էջերին եւ ցեղասպանություն վերապրած մեր ժողովրդի ապրումներին», ասաց Ս. Սարգսյանը: Ըստ նրա՝ Հայաստանը լուրջ աշխատանք է տանում Հարավային Կովկասում խաղաղությունը, կայունությունը եւ անվտանգությունն ամրապնդելու ուղղությամբ: Նախագահ Սարգսյանն այս համատեքստում դիտեց նաեւ հարաբերությունները հարեւան Թուրքիայի հետ եւ ցավոք Հայաստանի կատարած քայլերը՝ երկկողմանի հարաբերությունների բարելավման խոչընդոտները հաղթահարելու ուղղությամբ:

Հայաստանի նախագահի ասելով՝ Հարավային Կովկասում ինտեգրացիային խոչընդոտող հանգամանքներից է Ադրբեջանի որդեգրած անհանդուրժող դիրքորոշումը, որ մերժում է տարածաշրջանային համագործակցության ծավալումը՝ փոխարենը հնչեցնելով ռազմական հռետորիկա: Եւ պատահական չէ, որ Ադրբեջանն աշխարհում միակ երկիրն է, որ դեմ է հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմանը, մինչ վերոնշյալ գործընթացն արժանացել է ողջ քաղաքակիրթ աշխարհի հավանությանը: Նախագահ Սարգսյանն իր խոսքն ավարտեց՝ լավատեսություն հայտնելով հայ-սիրիական երկկողմ փոխշահավետ հարաբերությունների հեռանկարների առումով:

Տես էջ 2

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

## Ցեղասպանության հանձնաժողովի առաջին նիստը

Երեկ ՀՀ կառավարությունում տեղի է ունեցել Ցեղասպանության հանձնաժողովի առաջին նիստը, որը վարել է վարչապետ, հանձնաժողովի նախագահ **Տիգրան Սարգսյանը**: Վարչապետը մասնավորապես նշել է. «Տեղյակ եք, որ հասարակական կազմակերպությունների, Հանրային խորհրդի եւ Ազգային Ժողովի հետ ծրագրել էինք պատշաճ ձեւով կազմակերպել Ցեղասպանության 95-ամյակին նվիրված միջոցառումները: Այս աշխատանքները սկսել էինք դեռեւս անցած տարվանից, երբ նախարարությունները եւ գերատեսչությունները, ծրագրելով 2010 թվականի իրենց աշխատանքները, Ցեղասպանության 95-րդ տարելիցի կազմակերպման առաջարկություններ են ներկայացրել: Ստեղծելով կառավարարական հանձնաժողով վարչապետի գլխավորությամբ՝ նպատակ ունենք ի մի բերել այդ բոլոր առաջարկությունները եւ ապրիլի 24-ը պատշաճ անցկացնել: Նպատակահարմար է այսօրվանից սկսել Ցեղասպանության 100-ամյակին նախապատրաստվելու աշխատանքները՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ կան գաղափարներ, որոնք պահանջելու են մեզանից մի քանի տարի: Մասնավորապես, բարձր մակարդակով գեղարվեստական եւ վավերագրական ֆիլմեր նկարահանելու համար հասկանալի է, որ մեզնից շատ ավելի մեծ ջանքեր են պահանջվելու, անհրաժեշտ կլինի ավելի մեծ գումարների ներգրավվածություն ապահովել»:

Տիգրան Սարգսյանը նշել է, որ նախորդ տարիների ավանդական միջոցառումներն անցկացվելու են նաեւ այս տարի, որոնց գումարվելու են ոգեկոչման նոր արարողություններ:

Հանձնաժողովի անդամները վարչապետին են ներկայացրել մի շարք առաջարկություններ նոր միջոցառումների կազմակերպման եւ անցկացման վերաբերյալ:

Ս. Ս.

# Բողոքի ցույց Ստոկհոլմում

*Թուրք բանվորների ֆեդերացիան դատապարտում է Շվեդիայի խորհրդարանին*

Մարտի 21-ին Ստոկհոլմում Շվեդիայի թուրք բանվորների ֆեդերացիայի նախաձեռնությամբ բողոքի ցույց է կազմակերպվել: Շուրջ 2000 ցուցարարներ «Ո՛չ պատմության քաղաքականացմանը», «Մենք՝ թուրքերս կարեւորում ենք մեր հարեւաններին», «Ո՞վ սփյուռք, բարեկամությունը սաբոտաժի մի՛ ենթարկիր» մակագրությամբ ցուցապաստառներով, ինչպես նաեւ Թուրքիայի եւ Ադրբեջանի դրոշներով փորձել են, այսպես կոչված, հակազդել Շվեդիայի խորհրդարանի ցեղասպանության ճանաչման բանաձեւ ընդունելու մարտի 11-ի որոշմանը:

Ինչպես հայտնի է, այդ որոշումով Շվեդիայի խորհրդարանը ճանաչում եւ դատապարտում է 1915-ին Օսմանյան կայսրությունում հայերի, ասորիների, քաղդեացիների եւ Պոնտոսի հույների դեմ իրականացված ցեղասպանությունը, թերեւս դրանով էլ նախադրյալներ է ստեղծում, որ ցեղասպանության միջազգային ճանաչման պայքարը դառնա ընդհանուր՝ նրա զոհը դարձած բոլոր ժողովուրդների համար:

Նյու Յորքի «Թուրքական» կայքէջի վկայությամբ, ցույցի կազմակերպմանը աջակցել են Շվեդիայում գործող ադրբեջանական կազմակերպությունները, մասնակիցների թվում են եղել նաեւ ադրբեջանցիներ եւ թուրքալեզու այլ երկրների քաղաքացիներ: Շվեդիայի թուրք բանվորների ֆեդերացիայի նախագահ Հասան Դյուլեքըն ասել է, որ հակառակ անբարենպաստ եղանակին, թուրքերն ակտիվորեն մասնակցել են ցույցին, Շվեդիայի խորհրդարանի ընդունած որոշումը սխալ է, անելու են այն, ինչ հնարավոր է, որպեսզի «ուղղեն» որոշումը: Օգտվելով առիթից նշենք, որ բանաձեւն ընդունվել էր ձայների 331 կողմ եւ 330 դեմ հարաբերակցությամբ: Դրա օգտին քվեարկողների թվում էին Թուրքիայի երեք նախկին քաղաքացիներ:

Հ. Չ.

# Երիտասարդությանը մոտեցնել հոգեւոր արժեքներին



**Ոչ թե քննադատել կամ փնովել, այլ երիտասարդությանն աջակցել, պատմամշակութային եւ հոգեւոր արժեքներին հաղորդակից դարձնել: Սա Արմենական-ՌԱԿ կուսակցության գաղափարախոսություններից է: Այդ կապակցությամբ կուսակցությունը նախաձեռնել է մի շարք միջոցառումներ: Երիտասարդության դաստիարակությանն ուղղված ծրագրում մեծ տեղ պետք է ունենան հստակապես ճանաչողական այցերը, որպեսզի վաղվա բժիշկը, քաղաքական գործիչն ու ուսուցիչը նախ ճանաչեն իրենց պետությունը, գնահատեն արժեքներն ու դրանց վրա հենվելով շարունակեն գործունեությունը: Հանրապետության պատմամշակութային արժեքները ճանաչելու համար օրերս կուսակցության երիտասարդական թեւը նախաձեռնել էր ուխտագնացություն դեպի Արագածոտնի մարզ: «Ուխտագնացության նպատակն է երիտասարդների համար բացահայտել Հայաստանի ամենահետաքրքրական ու պատմամշակութային առումով ամենահարուստ վայրերից մեկը: Այստեղ կան 13-14-րդ դարի եկեղեցիներ, շինություններ: Երիտասարդներն այդ արժեքները պետք է հասկանան ու գնահատեն:**

Տես էջ 2

# Մեկ շաբաթից Բուլղարիան կրկին կքննարկի Հայոց ցեղասպանության բանաձեւը

**Մեր թերթը նախորդ համարում տեղեկացրել էր, որ Բուլղարիայի խորհրդարանը «Կարգուկանոն, իրավունք եւ արդարություն» կուսակցության նախաձեռնությամբ կրկին կքննարկի Օսմանյան կայսրությունում իրականացված Հայոց ցեղասպանության բանաձեւը: Մեկ ամիս առաջ բուլղարական խորհրդարանն արդեն մերժել էր բանաձեւը՝ պատճառաբանելով «թուրք-բուլղարական բարեկամական հարաբերությունները» (եւ կրկին ցեղասպանության իրողության ոչ մի հերքում - Հ. Ա.): Սակայն ինչպես արդեն տեղեկացրել է «Ազգը», այս անգամ, ըստ բուլղարական մամուլի, բանաձեւն անցնելու մեծ հնարավորություններ ունի՝ Էրդողանի լոնդոնյան հայտնի հայտարարությունների պատճառով: Իսկ Բուլղարիայի խորհրդարանում ներկայացված հայկական բանաձեւը փաստում է, որ «հայերի նկատմամբ իրականացված ցեղասպանությունը ամենադաժաններից է մարդկության արդի պատմության մեջ, դա հանցագործություն է ամբողջ մարդկության նկատմամբ»:**

**Բանաձեւն ընդգծում է, որ Օսմանյան կայսրությունում մշակված է եղել եւ իրականացվել է պետական նախաձեռնություն՝ ոչնչացնել հայկական էթնոսը «եւ արտաքսել նրանց իրենց՝ Արարատից Անատոլիա ձգվող պատմական հայրենիքից», նշված է բանաձեւում: Այնուհետեւ բուլղարական խորհրդարանում ներկայացված բանաձեւը հաստատում է, որ 1915-1917-ին օսմանյան իշխանությունների կողմից հայերը ենթարկվել են դաժան սպանությունների, արտաքսման, թալանի: «Հայ խաղաղ ազգաբնակչությունը բռնի արտաքսվել է, իսկ իշխանությունները խլել են նրանց ունեցվածքը: Սրանով հայ էթնոսը ենթարկվել է ֆիզիկական, տնտեսական, հոգեկան ցեղասպանության, որի հետեւանքով զոհ գնացին շուրջ 1,5 մլն հայեր: Հաշվի առնելով այս ամենը՝ Բուլղարիայի Ազգային ժողովը ճանաչում է 1915-1917-ին Օսմանյան կայսրությունում իրականացված հայերի ցեղասպանության վերաբերյալ փաստերի անհերքելիությունը եւ միանում է բոլոր այն միջազգային կառույցներին ու երկրներին՝ Եվրոխորհրդին, Բելգիային, Ֆրանսիային, Շվեյցարիային, Իտալիային, Հոլանդիային եւ այլոց, որոնք արդեն ճանաչել են այս փաստը»:**

**Վերջում բանաձեւը հայտարարում է, որ Բուլղարիան համաձայն չէ թուրքական պաշտոնական դիրքորոշմանը՝ Հայոց ցեղասպանությունը ժխտելու կապակցությամբ. «Մենք կոչ ենք անում Թուրքիային՝ վերանայել իր իսկ վերաբերմունքը Առաջին աշխարհամարտի իրական պատկերի վերաբերյալ: Մենք ցեղասպանություն ենք որակում հայերի բռնի արտաքսումը եւ զանգվածային սպանությունները Օսմանյան կայսրությունում: Մենք անհրաժեշտ ենք համարում, որ այս փաստաթուղթը պարտադիր լինի Բուլղարիայի բոլոր պետական ինստիտուտների, ԶԼՄ-ների համար: Մենք գտնում ենք, որ այսօրվա Թուրքիայում գտնվող բուլղարական եւ հայկական ազգային հուշարձանները, որոնք եվրոպական քաղաքակրթության մասն են կազմում, կարիքն ունեն ավելի լուրջ պահպանման: Մենք պահանջում ենք, որ Եվրոմիություն-Թուրքիա բանակցությունների ընթացքում հաշվի առնվի բուլղարական իշխանությունների տեսակետը, որ ԵՄ-ին անդամակցելու համար Թուրքիան պետք է ճանաչի Հայոց ցեղասպանությունը»:**

**Ահա այսպիսի բանաձեւ է մեկ շաբաթից քննարկվելու բուլղարական խորհրդարանում, որը, ինչպես արդեն վերը նշել ենք, այս անգամ ընդունվելու շատ ավելի մեծ հնարավորություններ ունի:**

ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ

AZG NEW PDF.qxd 22/03/2010 23:34 Page 1



# Նախ եւ առաջ պահպանել առողջ սիրտը

Ամբողջ աշխարհում ամենատարածվածը համարվում են արյան շրջանառության համակարգի հիվանդությունները:

Ըստ 2008 թվականի վիճակագրական տվյալների՝ վերը նշված հիվանդություններից մահվան ցուցանիշը բնակչության մահացության ընդհանուր կառուցվածքում կազմել է 50%, իսկ հիվանդությունը՝ 15,1 %:

«Մահացությունն ավելի բարձր է տղամարդկանց մեջ՝ ավելի շատ սրտամկանի սուր ինֆարկտից եւ տարածված է 40-60 տարեկան մարդկանց շրջանում», երեկ «Դե ֆակտո» ակումբում՝ ասուլիսի ժամանակ ասաց համաճարակաբան **Դիանա Անդրեասյանը**:

Սրտային հիվանդությունների առաջացումը կախված է մի շարք գործոններից՝ ֆիզիկական թերակտիվությունից, անառողջ սննդակարգից, ծխախոտից, ոչ պակաս դեր ունեն նաեւ սթրեսներն ու սոցիալական խնդիրները: Ճարպակալումով հիվանդները եւ հակված են ունենալու սրտանոթային հիվանդություններ, իսկ Հայաստանում, ըստ Դիանա Անդրեասյանի, գիրություն ու ճարպակալում ունեցողները կազմում են բնակչության 48,1 %-ը:

«Սրտանոթային հիվանդությունների բուժման մակարդակը տարբեր հիվանդանոցներում տարբեր աստիճանների վրա է: Ունենք հիվանդանոցներ, որոնք սրտի իշեմիկ հիվանդությունը բուժում են դեռ 18-րդ դարի մակարդակով», նշեց մյուս բանախոսը՝ սրտաբան-վիրաբույժ **Վիլեն Մանուկյանը**:

Մյուս կողմից էլ՝ սրտային հիվանդությունների բուժումը Հայաստանում շատ թանկ արժե, օրինակ՝ սրտի միջին վիրահատությունն արժե 2,5 միլիոն դրամ:

«Վիրահատությունները կատարում ենք 7-8 հազար դոլարով, բայց չպետք է մոռանանք, որ վիրահատություն ենք կատարում մի երկրում, որտեղ թոշակն ընդամենը 30 հազար դրամ է: Մեր երկրի պայմաններում վիրահատությունը պետք է արժենար ամենաշատը 1000 դոլար», ասաց Վիլեն Մանուկյանը:

Սրտանոթային հիվանդությունները սրվում են հատկապես գարնանը, ինչը պայմանավորված է արյան ճնշման տատանումներով: Վիլեն Մանուկյանը խորհուրդ է տալիս տարբեր տեսակի բուժումներից ու վիրահատություններից խուսափելու համար նախ եւ առաջ պահպանել առողջ սիրտը.

«Պետք է անցնել առողջ ապրելակերպի՝ չծխել, բարձրացնել ֆիզիկական ակտիվությունը, օրական 1-3 ժամ տրամադրել քայլելուն: Մարդը գոնե մի քանի ժամով պետք է կտրվի ամենօրյա աշխատանքային ռիթմից, որպեսզի օրգանիզմը կարողանա վերականգնվել, հակառակ դեպքում արդեն երիտասարդ տարիքում բարձր ճնշումը կդառնա սովորական երեւույթ», հավելեց սրտաբանը:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

# Հայ-սիրիական հարաբերությունները ...

*1-ին էջից*

Սիրիայի նախագահ Բաշար Ալ Ասադն էլ Հայաստանի նախագահի այցը Սիրիա համարեց եւս մեկ քար՝ դրված այն կառույցին, որ անցյալ տարի Սիրիայի նախագահի Հայաստան գալով է սկզբնավորվել եւ հիմա շարունակաբար պիտի վեր բարձրանա:

Նա նաեւ նշեց քննարկված հարցերի մասին, ուժեղ կապերը վկայակոչեց զույգ ժողովուրդների միջեւ, նկատեց, որ առավել պետք է ամրապնդվեն մեր տնտեսաառեւտրական հարաբերությունները: Նա եւս նշեց, որ առեւտրական փոխանակումը դեռ չնչին է, եւ ջանքեր են պետք ոլորտը խթանելու:

Մերձավոր Արեւելքի ու Կովկասյան տարածաշրջանի իրավիճակը երկու նախագահների քննարկումների ծիրում են եղել, հատկապես խաղաղության թեման: Նախագահ Սարգսյանը նախագահ Ասադին ասել էր, որ որոշումը՝ կարգավորելու հայ-թուրքական հարաբերությունները՝ կարեւոր քայլ է, իսկ նախագահ Ասադն էլ իր կողմից առաջարկել է, որ Սիրիան, ով լավ հարաբերություններ ունի ե՛ւ Հայաստանի, ե՛ւ Սիրիայի հետ, միջնորդի դեր խաղա հայ-թուրքական հարաբերություններում՝ ի շահ տարածաշրջանում բարեհարմար հարաբերությունների ստեղծման: Իսկ հայ-սիրիական հարաբերությունները պետք է առաջ գնան այն մակարդակով, որպեսզի համապատասխանեն երկու ժողովուրդների ձգտումներին:

Բաշար Ալ Ասադին տրված հայ լրագրողի հարցը հայ-թուրքական հարաբերություններին էր վերաբերում. «Մենք գտնում ենք, որ որեւէ հարց, երբ լուծվում է՝ այդ հարցի տերերը պետք է կարգավորեն այդ հարցը, հետո նոր հարեւանները: Պատմությունը ցույց է տալիս, որ երբ արտաքին միջամտություն է եղել, դա որեւէ դրական արդյունքի չի հասցրել, նույնիսկ խոչընդոտել է»: Ավելացնելով՝ որ կարծեք թե Հայաստանի եւ Թուրքիայի հարաբերություններն այսօր բնականոն հունով են ընթանում, իսկ եթե խոչընդոտներ կան՝ երկու կողմերն էլ պետք է ձգտեն այդ խոչընդոտների վերացմանը: Մենք որպես բարեկամ երկիր կմիջնորդենք, որ դրական լուծում լինի, այս ուղղությամբ կաշխատենք, քանի որ նախագահ Սարգսյանի ջանքերը զգացինք. նախագահ Սարգսյանի քայլն այս հարցում շատ ուժեղ քայլ է, եւ իրոք պետք է աջակցություն ստանա», ասաց Ասադը:

Ասոշիեյթեդ պրեսի թղթակիցը նախագահ Սարգսյանից հետաքրքրվեց ԼՂ խնդրի ներկա պահով: Նախագահը նկատեց, որ խնդրի լուծման համար առնվազն բոլոր կողմերի կամքն ու ցանկությունն է հարկավոր: Որպես Հայաստանի նախագահ՝ նա պարտավորություն ունի ԼՂՀ բնակչության անվտանգությունն ապահովելու, անվտանգության երաշխիքներ ապահովելու: «Սակայն մեր տարածաշրջանում եւս ռազմատենչ հայտարարություններ են հնչում, խորանում է փոխադարձ թշնամանքը», ասաց նախագահ Սարգսյանը՝ հիշելով, որ Ադրբեջանը մերժեց իր առաջարկը ուժի չկիրառման փաստաթուղթ ստորագրելու, ինչը ՄԱԿ-ի եւ ԵԽ փաստաթղթերի եւ համաձայնագրերի ոգուն հակառակ է: Իսկ ընդհանրապես՝ Մինսկի խմբի շրջանակում բանակցությունները շարունակվում են. «Մենք փնտրում ենք լուծումներ, որոնք հակամարտության պատճառներն ու հետեւանքները կվերացնեն, եւ հուսով եմ՝ այդպիսի լուծում կգտնվի», ասաց նախագահ Սարգսյանը:

# Երիտասարդությանը մոտեցնել հոգեւոր արժեքներին

*1-ին էջից*

**Հոգեւոր զգացողությունը, որ կա այստեղ, քաղաքում չենք զգում, որովհետեւ նյութական արժեքների հետեւից ենք ընկնում ու ժամանակ տրամադրում նրանց պահպանման համար: Բայց այստեղ կա գանձերի պահոց, որից շատ հեռու ենք: Մեր երիտասարդներն այս կոթողների մեջ պետք է գտնեն իրենց ու դրանք գնահատելով շարունակեն իրենց գործունեությունը», ասում է կուսակցության վարչության անդամ Գայանե Մուրադյանը:**

**Ուխտագնացության առաջին կանգառը Մուղնու Սուրբ Գեւորգ եկեղեցին էր: Մեր այցելության ժամանակ եկեղեցում պատարագ էր: Եկեղեցին լիքն էր, ու հոտը քահանայի հետ երգում էր շարականներ. փաստ, որ հաճախ չես հանդիպի Երեւանում:**

**Կարբիի Աստվածածին եկեղեցու սպասավոր Սամվել սարկավագն էլ կարեւորեց նման ուխտագնացությունների նշանակությունն ու երիտասարդների ներգրավվածությունը: Երիտասարդությանը հոգեւոր արժեքներին ավելի մոտեցնելու ցանկությամբ նա օրհնեց ու իր բարեմաղթությունը հաղորդեց նրանց:**

**Քանի որ ուխտագնացության նպատակը ճանաչողական էր, յուրաքանչյուր եկեղեցում երիտասարդներին ներկայացնում էին ուշագրավ ու շատ կարեւոր տեղեկություններ տվյալ կոթողի, նրա ճարտարապետական առանձնահատկությունների ու պատմական արժեքի մասին:**

**Կարբի գյուղի բնակիչների համար առանձնահատուկ նշանակություն ունեցող Վահան Թեքեյանի անվան դպրոցն էլ հյուրընկալեց երիտասարդներին: Գեղեցիկ կահավորված դահլիճում, տեխնիկապես հագեցած դասարաններում այսօր սովորում է շուրջ 1000 աշակերտ: Դպրոցի քառաձայն երգչախումբը դասվում է լավագույնների շարքում ու հաճախ ներկայանում արտասահմանում: Դպրոցի տնօրեն Արսեն Օհանյանը գիտե մեկ պարզ ճշմարտություն ու արդեն երկար տարիներ հետեւում է դրան. դպրոցը պետք է երիտասարդներին դաստիարակի, օգնի: Նա նկատում է, որ հայրենասիրություն չեն դաստիարակում, այլ օրինակով ցույց են տալիս: Դպրոցում ավանդույթ կա, յուրաքանչյուր տարի դպրոցի մանկավարժական կազմը մի քանի օրով մեկնում է Ղարաբաղ, այցելում զորամասեր, շփվում զինվորների հետ: Օհանյանը նկատում է, որ այս կերպ աշակերտների հոգեբանությունն ու մտածելակերպն էլ են փոխվում:**

**Ուխտագնացության ընթացքում երիտասարդներն այցելեցին նաեւ Սաղմոսավանք, Օհանավանք, Կարմրավոր, Ծիրանավոր, Սպիտակավոր եկեղեցիները:**

**Վերջին երկու եկեղեցիները, որ կառուցվել են 5-րդ դարում, կանգնած էին կործանման շեմին: Տանիք չկար, պատերը փլվում էին: Մինչդեռ դրանք մեր պատմության խոսուն ու շատ գեղեցիկ վկայություններն են: Երեւանի կենտրոնում մեկ այլ շինություն քանդելու եւ տեղում եկեղեցի կառուցելու փոխարեն լավ կլիներ վերանորոգել պատմական արժեք ներկայացնող այս եկեղեցիները:**

**«Հպարտություն եմ զգում միջնադարյան այս կառույցները տեսնելով, բայց ցավալի է որ դրանց կողքին կան մատուռներ, փոքրիկ եկեղեցիներ, որոնք ավերված են, զգում են ուշադրության կարիք: Իրենց մեջ հոգի կա, բայց խեղճացած են: Դա ինձ տխրեցնում է: Այս այցերի նպատակը պետք է լինի նաեւ վեր հանել խնդիրները: Մենք երիտասարդ ենք ու տեսնելով լքված, ավերված եկեղեցիները պետք է խնդիրները բարձրաձայնենք, շեշտենք ու հիշեցնենք մարդկանց, կազմակերպություններին, որ ունենք հրաշք բնություն, հրաշալի եկեղեցիներ, ճարտարապետություն, բայց դրանք չպետք է անուշադրության մատնել», նկատում է Անի Մաթեւոսյանը:**

**Բազմաթիվ վառ տպավորություններից զատ Լիլիթ Սիմոնյանը Երեւան է տանում լուսանկարների հսկայական հավաքածու: «Շատ եմ լուսանկարել: Երեւի եղանակը նպաստեց, կամ էլ մթնոլորտն էր շատ լավը, որ կադրերն այսքան հաջող ստացվեցին», ասում է նա:**

**Փարիզի Չոբանյան ինստիտուտի տնօրեն, Europe et Orient հանդեսի խմբագիր Վարուժան Սիրապյանն էլ հեռանում է լավ տպավորություններով: Սիրապյանը նկատում է, որ Ֆրանսիայում մեծ ու անվանի կուսակցություններն ունեն իրենց երիտասարդական թեւերը, բայց այնտեղ հնարավորությունները քիչ են երիտասարդների հետ շփվելու, նրանց մտահորիզոնին ու գաղափարներին ծանոթանալու համար: «Այդ կապակցությամբ արժեւորում եմ նման հանդիպումները: Կուսակցությունը կարեւոր տեղ է տալիս երիտասարդության ներգրավվածությանը, նրանք մեր երկրի ապագան են, ու պետք է նրանց համար ճանապարհ հարթել, սովորեցնել, դաստիարակել: Երիտասարդությունը յուրաքանչյուր կուսակցության, յուրաքանչյուր հասարակության եւ պետության հպարտությունն է», ասում է նա:**

**Կուսակցության փոխատենապետ Արմեն Մանվելյանը հավելեց, որ հաջորդ ուխտագնացությունները կկազմակերպվեն Գյումրիում եւ Եղեգնաձորում:**

**2010 հոբելյանական է. լրանում է Արմենական կուսակցության 125-ամյակը: Կկազմակերպվեն մեծ թվով միջոցառումներ՝ այցելություններ պատմամշակութային վայրեր, կհրատարակվեն գիտական հոդվածներ: Լույս կտեսնեն նաեւ կուսակցության պատմությանը նվիրված գրքեր: Կուսակցության 125-ամյակը երիտասարդները կտոնեն յուրովի. Երեւանում կկազմակերպվի ռոք համերգ:**

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Արագածոտնի մարզ

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴՈՒՄ

# Մեր երկրում սեյսմիկ անվտանգության մակարդակը կբարձրացվի

**Ազգային անվտանգության խորհրդի 2010 թվականի աշխատանքային ծրագրի համաձայն՝ այս տարի պետք է մշակվի եւ ԱԽ հաստատմանը ներկայացվի սեյսմիկ անվտանգության հայեցակարգը: Հայեցակարգի մշակման աշխատանքային խումբը երեկ արդեն նիստ է գումարել, որը վարել է Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Արթուր Բաղդասարյանը:**

**«Սեյսմիկ անվտանգության խնդիրները մեր երկրի համար բացառիկ կարեւոր նշանակություն ունեն», ասել է Ա. Բաղդասարյանը:**

**Հայաստանի փրկարար ծառայության տնօրեն, արտակարգ իրավիճակների նախարարի առաջին տեղակալ, գեներալ-լեյտենանտ Էդիկ Բարսեղյանը կարեւորել է 1991 թվականին սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայության ստեղծումը, սակայն նշել է, որ ոլորտում շատ խնդիրներ կան, որոնք հայեցակարգային ծրագրավորված լուծում են պահանջում:**

**Ոլորտի իրավիճակը եւ հիմնախնդիրները ներկայացրել է «Սեյսմիկ պաշտպանության հյուսիսային ծառայություն» ՊՈԱԿ-ի տնօրեն, երկրաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սերգեյ Նազարեթյանը: Նրա խոսքով՝ պետք է կազմել հավանականային գնահատման քարտեզ, գրեթե բոլոր քաղաքներն ունեն սեյսմիկ միկրոշրջանացման քարտեզներ: Ընթացիկ վտանգի գնահատման համար պետք է արդիականացնել սարքավորումների ու դիտարկումների ցանցը: Ըստ արդեն պատրաստված ծրագրի՝ այն կարժենա շուրջ 200 մլն դրամ: Ճապոնական դրամաշնորհի միջոցներով այս տարվանից սկսվելու է մայրաքաղաքի սեյսմիկ ռիսկերի գնահատումը: Կարեւոր է նաեւ կենսաապահովման գծերի ռիսկի գնահատումը, այսօր ուշադրությունից դուրս են մնացել քիմիական գործարաններն ու հիդրոկայանները, լուրջ խնդիր է նաեւ բազմաբնակարան շենքերի ու կառուցվածքների ուժեղացումը, պետք է ուսումնասիրվեն մետրոյի կայարանները, կամուրջներն ու թունելները:**

**Ամփոփիչ խոսքում Ա. Բաղդասարյանը փաստել է, որ ոլորտում օրենսդրական եւ ինստիտուցիոնալ բարեփոխումների կարիք կա, ուստի այսօր մեր երկրում, հրատապ անհրաժեշտություն է սեյսմիկ անվտանգության հայեցակարգի մշակումը: Նիստում որոշվել է սեպտեմբերին հայեցակարգը ներկայացնել ԱԽ հաստատմանը:**

# Եվրոբանկը 10 մլն դոլար տրամադրեց «Ամերիաբանկին»

**Ինչպես տեղեկացանք «Ամերիաբանկից», երեկ Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկը «Ամերիաբանկին» է տրամադրել 10 մլն ԱՄՆ դոլարի նոր վարկային գիծ մասնավոր ՓՄՁ-ների հետագա վարկավորման համար, որը կուղղվի արդյունաբերության ոլորտի վարկավորմանը:**

# Թեժ գիծ՝ արտակարգ իրավիճակների նախարարությունում

**Բնակչության պահանջներին, մտահոգություններին ու բողոքներին օպերատիվ արձագանքելու, համակարգի ստորաբաժանումների աշխատակիցների գործունեության վերաբերյալ կարծիքներն ու առաջարկները լսելի, ինչպես նաեւ հասարակության հետ կապերն առավել սերտ, գործուն եւ արդյունավետ դարձնելու նպատակով ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունում ստեղծվել է նախարարի անմիջական հսկողության տակ գործող թեժ գիծ:**

**Թեժ գծի հեռախոսահամարներն են. 24 24 22, 56 76 56, իսկ էլ. փոստի հասցեն է. mes@ema.am:**

# Ինչպես աշխուժացնել արբիտրաժային դատարանի գործունեությունը

**ՀՀ առեւտրաարդյունաբերական պալատին (ՀԱԱՊ) կից արբիտրաժային դատարանում երեկ տեղի ունեցած հանդիպմանը մասնակցում էին ՀԱԱՊ նախագահ, Աժ պատգամավոր Մարտին Սարգսյանը, արբիտրաժային դատարանի նախագահ Արտաշես Կակոյանը, արդարադատության նախարարության, բանկերի միության, շինարարների միության եւ շահագրգիռ այլ կառույցների ներկայացուցիչներ: Քննարկման թեման էր արբիտրաժային դատարանի կայացմանն ու գործունեության աշխուժացմանն առնչվող հարցը: Մասնակիցները նշեցին, որ այդ նպատակով դատարանի գործունեության մասին իրազեկման աշխատանքներ պետք է իրականացվեն ոչ միայն Երեւանում, այլեւ մարզերում, արբիտրաժային դատարանի վերաբերյալ բուհերում կկազմակերպվի ուսուցում եւ կպատրաստվեն մասնագետներ:**

**Հիշեցնենք, որ ՀՀ ԱԱՊ կից արբիտրաժային դատարանը ստեղծվել է 2007-ի ապրիլին «Առեւտրային արբիտրաժի մասին» եւ «Առեւտրաարդյունաբերական պալատների մասին» օրենքների հիման վրա:** Ա. Մ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԹ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
Ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*** / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Ալիեւյան մոլորությունները՝ Նովրուզի նվեր

## Սկզբունքորեն բանակցությունների հիմնական մասն ավարտվա՞ծ է

Ադրբեջանի նախագահը հաճախ է առիթ-անառիթ ադրբեջանական իրականության գովերգմամբ զբաղվում, սակայն ավելի հաճախ է պատահում, որ **Իլհամ Ալիեւը** ճառեր արտասանելիս անդրադառնա այնպիսի հարցերի, որոնք, ողջամտության թելադրանքով, հարկ էր չբարձրաձայնել:

Մարտի 20-ին Ալիեւը, Նովրուզի տոնակատարության առնչությամբ ելույթում, օրինակ, հայտարարել է, թե երկիրը հարգանքով է վերաբերվում իր պատմական անցյալին, «գործադրում է բոլոր միջոցները՝ պահպանելու ազգային մշակութային ժառանգությունը»: Եթե նման կերպ է Ալիեւը հասկանում, ասենք, Հին Ջուղայի գերեզմանատան խաչքարերի ու շիրմաքարերի ոչնչացումը, ուրեմն Ադրբեջանի նախագահը հասկացությունները տեղին օգտագործելու խնդիր ունի, այլապես պատմական անցյալի վկայությունները ոչնչացնելը որպես պահպանում ներկայացնելը հերթական կեղծիքն է, սուտը, որ դրսի ու ներսի համար ասվում է Ադրբեջանում:

Ադրբեջանի հզորության ու դրա նման այլ բնութագրիչների կողքին նախագահ Ալիեւը կարեւորագույն է որակել ղարաբաղյան հակամարտության կարգավորումը, ինչին հետեւած մտքերը կրկին ադրբեջանական դատարկ պնդումների շարքից են, թե Լեռնային Ղարաբաղը ինքնավարության բարձր կարգավիճակ թերեւս ունենա, բայց ոչ անկախություն: Նորից Ալիեւի պարագայում փաստերի աղավաղման վիճակ է, երբ արդեն իսկ անկատ միավորի առնչությամբ «տարածքային ամբողջականության» պնդումներն են գործի դրվում:

Առավել հետաքրքրական են բանակցային գործընթացին առնչվող ալիեւյան գնահատականները: «Մենք այսօր կարգավորման որոշիչ փուլում ենք: Կարելի է ասել, որ սկզբունքորեն բանակցությունների հիմնական մասն ավարտված է: Ներկայացված առաջարկությունները, ընդհանուր առմամբ ու որոշ ոչ մեծ բացառություններով, բավարարում են Ադրբեջանի շահերը», ասել է Ալիեւը: Այս պարագայում էլ Ալիեւի հաջորդ միտքը, թե Ադրբեջանն իր դիրքորոշումից ոչ մի քայլ հետ չի կանգնել, բնավ չի համընկնում բանակցային հիմնական մասի անցած լինելու մտքին, քանի որ այդ դեպքում ստացվում է, թե Հայաստանը համաձայնել է Ադրբեջանի ամեն ուզածին, ինչն հաստատապես իրականություն չէ:

Մեկ այլ անտրամաբանական միտք էլ Ալիեւի այն պնդումն է, թե Լեռնային Ղարաբաղի անկախությունը «Ադրբեջանը երբեք չի ճանաչի, ուրեմն եւ չի ճանաչի աշխարհը»: Հասկանալի է, որ անհավանական նկրտումներ ունեցող Ալիեւ կրտսերը երկրի հզորության սեփական տեսությանը հետեւելով կարող է ընկնել մոլորության մեջ, թե Ադրբեջանն ու աշխարհը նույն կերպ են վերաբերվում բոլոր հարցերին, սակայն այս դեպքում հարկ է, որ Ադրբեջանի նախագահը չմոռանա հարեւան Աբխազիայի եւ Հարավային Օսիայի պարագան: Սրանց պարագայում ճանաչում դրսեւորած երկրների շարքը մեծ չէ, սակայն նույն կերպ աշխարհի շատ այլ երկրներ մի երկար ժամանակ անկախության չճանաչման պայմաններում են ապրել, մինչ աշխարհում փոխվել ու փոխվում է մոտեցումը:

Իլհամ Ալիեւն այս անգամ, չգիտես ինչու, ռազմաշունչ ոչինչ չի ասել, ընդհակառակը, մի քանի անգամ նշել է, թե ներկա դրությամբ կարգավորման լավ հնարավորություններ կան: «Արժանին մատուցելով» սեփական «մեծն» հոր վարած քաղաքականությանը, որ, իր իսկ խոսքերով, Իլհամ կրտսերը շարունակում է, Ադրբեջանի նախագահը, հարեւան Թուրքիայի օրինակով, հերթական սպառնալիքն է ուղղել նրանց, ովքեր իբր խառնվում են Ադրբեջանի ներքին գործերին: Ըստ այդմ, Ալիեւը հայտարարել է, թե ով խառնվի, նրա հետ կվատանան Ադրբեջանի հարաբերությունները:

Խոսքի ավարտին, արդեն իսկ երեւի մոռանալով, որ հայ-թուրքական հարաբերությունների առնչությամբ արձանագրությունների ի հայտ գալու սկզբում սեփական երկիրը հիստերիկ կոչեր էր անում ու վախվորած հետեւում ստորագրման ընթացքին, Ալիեւը նշել է, թե «չենք խառնվում այլոց ներքին գործերին, ոչ մեկին չենք քննադատում, թեեւ որոշ դեպքերում քննադատության բավարար հիմքեր կան»:

Հետաքրքրական է, թե երբ ու ինչպես հնարավոր կլինի վերջ դնել գոնե հրապարակային ստերին, ո՛ր երկրի պարագայում էլ լինի:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԸՍՏ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ

# Հունվար-փետրվարին՝ 3,1 տոկոս տնտեսական աճ

Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության հրապարակած 2010-ի հունվար-փետրվար ամիսների օպերատիվ սոցիալ-տնտեսական ցուցանիշների համաձայն, Հայաստանի տնտեսական աճը կազմել է 3,1 տոկոս: Համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) կազմել է 321 մլրդ 650 մլն դրամ: Փետրվարին հունվարի համեմատ աճն ավելի նշանակալից է եղել՝ 15,2 տոկոս, ինչը, սակայն, բնական պետք է համարել, քանի որ տնտեսական ակտիվությամբ հունվարը սովորաբար զիջում է փետրվարին: Միաժամանակ, հիշեցնենք, անցյալ տարվա հունվար-փետրվարին արձանագրվել էր 3,7 տոկոս տնտեսական անկում:

2009-ի հունվար-փետրվարի համեմատ, բացի շինարարությունից եւ ծառայություններից, մեր տնտեսության բոլոր ճյուղերն աճ են արձանագրել: Մասնավորապես, արդյունաբերությունն աճել է 9,4 տոկոսով: Փետրվարին հունվարի նկատմամբ նույնպես արդյունաբերության աճը զգալի է՝ 9,9 տոկոս: Էլեկտրաէներգիայի արտադրությունը հունվար-փետրվարին աճել է 3,9 տոկոսով, փետրվարին՝ հունվարի համեմատ սակայն անկում է արձանագրվել 11 տոկոսով: Գյուղատնտեսությունն աճել է 2,7 տոկոսով, իսկ փետրվարին հունվարի նկատմամբ նվազել՝ 15,9 տոկոսով: Մանրածախ առեւտրում արձանագրվել է փոքր՝ 0,6 տոկոս աճ, իսկ հունվարի համեմատ փետրվարին՝ 21 տոկոս աճ: Շինարարության անկումը սկսել է նվազել՝ նախորդ տարվա հունվար-փետրվարի համեմատ՝ 3 տոկոսով, իսկ այս տարվա փետրվարին հունվարի համեմատ այս ոլորտում արձանագրվել է 16,2 տոկոս աճ: Ծառայությունների ծավալը մնացել է անփոփոխ, իսկ փետրվարին հունվարի համեմատ արձանագրվել է 28 տոկոս աճ:

Արտաքին առեւտրաշրջանառությունն ավելացել է 22,5 տոկոսով եւ կազմել 625,2 մլն դոլար: Արտահանումը կազմել է 121,4 մլն դոլար, երկրորդ ամսին անընդմեջ արձանագրելով բավականին լուրջ աճ՝ այս անգամ 53,5 տոկոսով: Փետրվարին հունվարի համեմատ աճը կազմել է 25,2 տոկոս: Ներմուծումը կազմել է 503,8 մլն դոլար, աճելով 16,8 տոկոսով: Փետրվարին հունվարի համեմատ աճը 0,3 տոկոս: Արտաքին առեւտրի բացասական հաշվեկշիռը կազմել է ավելի քան 382 մլն դոլար:

Միջին ամսական աշխատավարձը Հայաստանում հունվար-փետրվարին կազմել է մոտ 101 հազար դրամ, մասնավոր հատվածում կազմել է 127 հազար դրամ, պետականում՝ 83 հազար դրամ: Հունվար-փետրվարին գնաճը կազմել է 8,2 տոկոս նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Պաշտոնապես գրանցված գործազուրկների քանակն ավելացել է 10,4 տոկոսով, բայց փետրվարին հունվարի համեմատ նվազել է11,5 տոկոսով:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# Ադրբեջանական բանակը՝ ղարաբաղցիների շահերի պաշտպա՞ն

Մեկնաբանելով ուժի չկիրառման համաձայնագիր ստորագրելու մասին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի՝ Evronews-ով հնչեցրած կոչը, ադրբեջանցի քաղաքագետ **Վուգար Սեիդովը** Ազերթաջ գործակալությանն ասել է, թե նման փաստաթուղթ ստորագրելուց առաջ Հայաստանը, մասնավորապես, «պետք է զորքերը դուրս բերի օկուպացված տարածքներից»:

Քաղաքագետի այսօրինակ դատողությունից վերստին համոզվում ես, որ Ադրբեջանում ոչ մի մակարդակում տավտոլոգիայի պակաս բնավ չկա: Վ. Սեիդովի մեկնաբանության ենթատեքստը հիշեցնում է Միլլի մեջլիսի նախկին պատգամավոր, ժողովրդական ճակատ կուսակցության անդամ, պատերազմական ժամանակաշրջանում գումարտակի հրամանատար դարձած Ֆաիկ Բախշալիեւի մի հարցազրույցի բովանդակությունը: Հարցազրույցը վերջինիս հետ անձամբ վարել եմ 1991-ի սեպտեմբերի 21-ին, երբ նա Ռուսաստանի Դաշնության, Ղազախստանի եւ Ադրբեջանի նախագահներ Ելցինի, Նազարբաեւի ու Մութալիբովի հետ ժամանել էր Ստեփանակերտ: Այն տպագրվել է «Արցախ» հանդեսի 1992-ի առաջին համարում՝ «Եթե ժողովրդավարությունն Ադրբեջանում հաղթեց՝ կշահենք բոլորս միասին» վերնագրով:

Ցավոք, ժողովրդավարությունն Ադրբեջանում այդպես էլ չհաղթեց, որովհետեւ ժողովրդավարության ջատագով ներկայացող «խալգ ջաֆասին» տխրահռչակ Աբուլֆազ Էլչիբեյի գլխավորությամբ պատերազմ սանձազերծեց պաշարված Ղարաբաղի դեմ:

Հետեւանքները մեզ քաջ հայտնի են, բայց հիշենք, թե այն ժամանակ ինչ էր ուզում Ֆաիկ Բախշալիեւը: Նա գտնում էր, որ Ղարաբաղին խաղաղություն բերող ուղին Ադրբեջանում ազգային բանակ ստեղծելն է: Ըստ ԱՃ գաղափարաբանության, միայն ազգային բանակի ներկայությունը կարող էր կարգուկանոն հաստատել Լեռնային Ղարաբաղում: Երբ նրան հարցրինք, թե արդյո՞ք Ղարաբաղին նույնպես զինված ուժեր պետք չեն, նա բացասական պատասխան տվեց՝ ի պարզաբանում ասելով, թե «ադրբեջանական բանակն ինքը կարող է պաշտպանել ղարաբաղցիներին»: Հասկանալի է, իհարկե, թե ումից էր մեզ ուզում պաշտպանել Ադրբեջանը:

Նույն այս ինֆանտիլության համատեքստում կարելի է գնահատել Վուգար Սեիդովի վերոհիշյալ մեկնաբանությունը: Ադրբեջանը պարբերաբար հնչեցնում է հայկական զորքերը շփման գծից հանելու պահանջը, բայց երբեք չի ուզում բացատրել Ղարաբաղի շուրջն իր բանակն ակն ընդ ական պահելու իրական նպատակը: ԼՂՀ զինված ուժերն արդեն գլխավոր խնդիրը լուծել են՝ գծելով երկրի անվտանգությունն ապահովող սահմանները: Եվ եթե մտավախություն կա, թե Ղարաբաղը կարող է հարձակվել եւ եւս մի քանի շրջաններ գրավել, ապա հայ ինքնապաշտպանները դա կարող էին անել նաեւ 1993 թվականին, երբ ադրբեջանական ասկյարները ռազմադաշտից խուճապահար ճողոպրում էին:

ԼՂՀ բանակն իր կազմավորման օրվանից պաշտպանական առաքելություն ունի եւ հենց այդպես էլ կոչվում է, թեպետ ՊԲ հրամանատարը քանիցս հայտարարել է, որ եթե Ադրբեջանը հանկարծ ռազմական գործողություններ սկսի, ապա ղարաբաղյան զինուժը ստիպված է լինելու այդ գործողությունները տեղափոխել հակառակորդի տարածքի խորքերը: Գուցե այս հիշեցումի՞ց է զգուշանում Ադրբեջանը...

ՀՀ նախագահի կոչը, թվում է, պետք է որ լավ ազդակ լինի Իլհամ Ալիեւին եւ ողջամտություն ցուցաբերելու հիմք դառնա, եթե նա իրականում սահմանափակված չէ մադրիդյան սկզբունքներ կոչվածը բացառապես իր երկրի շահերի մեջ տեսնելու ցանկությամբ:

ԿԻՄ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Ստեփանակերտ

# Նաիրի Բաղալյանը պահանջում է ավելի քան 10 մլն դոլարի փոխհատուցում

Հոկտեմբերի 27-ի ահաբեկչության կազմակերպման ու աջակցման գործի մեջ մեղադրվող եւ այնուհետեւ արդարացված լրագրող Նաիրի Բաղալյանը Հայաստանում է: Նա պատրաստվում է դիմել դատարան միանգամից երեք հայցով: «Առաջին հայցը նախաքննության մարմինների անգործության դեմ է, երկրորդով ես ավելի քան 10 մլն դոլարի ֆինանսական փոխհատուցում եմ պահանջում ինձ խոշտանգումների ենթարկելու համար եւ վերջին հայցով ես պահանջելու եմ պաշտոնական ներողություն երկրի նախագահի, դատախազի եւ ոստիկանության ու զինվորական ոստիկանության պետերի կողմից», «Ուրբաթ» ակումբում երեկ հայտարարեց **Նաիրի Բաղալյանը**:



2000 թվականի հունիսի 27-ին արդարացվելուց հետո՝ 2002 թվականի մարտին Նաիրի Բաղալյանը դիմել է դատարան իրեն ապօրինի ձերբակալելու, խոշտանգելու եւ իր անունը հոկտեմբերի 27-ի ահաբեկչության գործի հետ կապելու համար: Գործը մինչ օրս լուծում չի ստացել եւ գտնվում է բողոքարկման փուլում:

Նաիրի Բաղալյանը քաղաքական ապաստան է ստացել ԱՄՆ-ում 2007 թվականի մայիսի 22-ին: Հայաստանում է պատրաստվում մնալ այնքան, մինչեւ կսպառվեն ներպետական դատական բոլոր ատյանները դիմելու հնարավորությունները, որից հետո լրագրողը դիմելու է միջազգային դատարաններ: «Իմ հանդեպ կատարված ձերբակալությունները եւ խոշտանգումները քաղաքականապես մոտիվացված են եղել եւ շարունակվել են անգամ իմ արդարացվելուց հետո: ԱՄՆ-ում քաղաքական ապաստան ստացել եմ միգրացիոն դատարանում երեք դատավորների միաձայն որոշմամբ: Այսպիսով, անգամ ԱՄՆ-ի դատարանը, ինձ ապաստան տրամադրելով, հաստատել է, որ իմ դեմ հարուցված մեղադրանքներն անհիմն են», հայտարարեց Նաիրի Բաղալյանը:

Միլիոնավոր դոլարների փոխհատուցում ստանալու նախադեպն աշխարհում նորություն չէ, սակայն բացառիկ կլինի Հայաստանի համար: «Իմ հայցերի քննումը շարունակվում է տարիներ շարունակ, իրենք հույս ունեն, որ ես կզզվեմ եւ վերջ կտամ: Բայց ես մինչեւ վերջ գնալու եմ, եւ կառավարությունը ստիպված է լինելու ինձ վճարել», հայտարարեց Նաիրի Բաղալյանը:

1999 թվականին Նաիրի Բաղալյանը «Լոգոս» հետազոտական կենտրոնի տնօրենն էր, համագործակցում էր Վազգեն Սարգսյանի եւ Կարեն Դեմիրճյանի «Միասնություն» դաշինքի հետ: «Վազգեն Սարգսյանի հոկտեմբերի 26-ի որոշմամբ ես նշանակվելու էի «Արմենպրես» գործակալության տնօրեն: Հոկտեմբերի 27-ի ահաբեկչության կազմակերպումը բնավ իմ շահերից չէր բխում», նկատեց Նաիրի Բաղալյանը:

Լրագրողը նշում է, որ դատական այս գործընթացներում ինքն արդեն ծախսել է ավելի քան 100 հազար դոլար եւ գործը կիսատ թողնել չի պատրաստվում:

ԱՐԵՎԻԿ ԲԱԴԱԼՅԱՆ

# Կարանտին Տավուշի մարզում խոզերի հիվանդության պատճառով

Աֆրիկյան ժանտախտ հիվանդության տարածման պատճառով, որի վարակը հայտնաբերվել է Տավուշի մարզի 5 գյուղերում, մարզում հայտարարվել է կարանտին: Մարտի 18-ի դրությամբ մարզում հիվանդություններից արդեն սատկել է 220 խոզ: Տավուշի մարզում ստեղծվել է հատուկ հանձնաժողով, որում ընդգրկված են մարզային եւ գյուղական համայնքների ղեկավար ներկայացուցիչներ: Հանձնաժողովը կիաշվառի վարակված խոզերը, ոստիկանական հատուկ ջոկատները, սանիտարահամաճարակային եւ անասնաբուժական ծառայությունների ներկայացուցիչները Լոռու մարզ տանող ճանապարհին կարանտինային կետեր կբացեն:

Տեղեկացնենք նաեւ, որ, որպես կանոն, վարակված խոզերը պետք է տեղափոխվեն բնակչությունից հեռու առանձին տարածքներ, որտեղ եւ անհրաժեշտ է նրանց անարյուն ոչնչացնել:

Հ. Ա.

AZG NEW PDF.qxd 22/03/2010 21:53 Page 1



## Արժեքներ

# Երբ ժողովուրդը վերադառնում է իր հոգեւոր արժեքներին

«Եկեղեցու կառուցումը սուրբ եւ նվիրական գործ է, իսկ Սուրբ Պողոս-Պետրոս եկեղեցու վերականգնումը՝ սրբազան տուրք է նախնյաց հանդեպ եւ արժեքավոր ավանդ՝ եկող սերունդներին»:

Երբ խորհրդային տարիներին պետական մակարդակով կազմակերպված քաղաքականությամբ հատուկ հետապնդում էր իրականացվում եկեղեցու նկատմամբ, քանդվում ու ոչնչացվում էին քրիստոնեական կոթողները, թերեւս դժվար էր պատկերացնել, որ երբեւէ, գեղեցիկ մի օր, փլուզվելու է խորհրդային իշխանությունը եւ իր զսպաշապիկն այլեւս չի պարտադրելու հասարակությանը՝ հեռացնելով ժողովրդին հոգեւոր իր արժեքներից:

Այսօր, սակայն, կացությունը բոլորովին այլ է, խորհրդային բռնատիրությունը ոչ միայն անհետ կորել է անցյալի մշուշում, այլեւ հետզհետե վերանում են նաեւ դրա պատճառած դառը հետեւանքները. վերականգնվում են Աստծո տաճարները, աշխուժանում է հասարակության հոգեւոր կյանքը:

Հոգեւոր այդ վերածնության ճանապարհին վերականգնվում է նաեւ խորհրդային շրջանում քանդված 5-7-րդ դարերում կառուցված եւ 17-րդ դարում վերակառուցված Սուրբ Պողոս-Պետրոս եկեղեցին: Թվում է, թե սա միայն ուրախության եւ հոգեւոր մխիթարության առիթ պիտի տա յուրաքանչյուր հայորդու, սակայն քանի որ մեր հասարակությունում ավանդույթ է ձեւավորվել՝ ընդվզելու նոր իրողության դեմ, հետեւաբար պատահական չէ, որ հասարակության որոշ անդամներ նախաձեռնեցին «Մոսկվա» կինոթատրոնի ամառային դահլիճի քանդման պաշտպանությունը՝ պահանջելով մշակութային արժեքների հանդեպ հարգանք:

Կարծում ենք՝ ճիշտ կլիներ մշակութային արժեքների հարգանք պահանջելուց առաջ անդրադառնալ, որ մեր բազմադարյա մշակույթը, հոգեւոր արժեքները եւ հուշարձանները պահպանվել են եկեղեցու ծոցում, եւ այսօր էլ այդ նպատակով նախատեսվում է Սուրբ Պողոս-Պետրոս եկեղեցու վերականգնումը, որը ոչ այլ ինչ է, եթե ոչ պահպանություն եւ հարգանք՝ մշակութային արժեքի նկատմամբ:

Եկեղեցու կառուցման դեմ առաջ եկած ընդվզումը, թերեւս, կարելի լիներ օբյեկտիվ համարել, եթե նկատի չունենայինք երկու կարեւոր հանգամանք:

Առաջինը՝ կառուցվում է ոչ թե հասարակական մի օբյեկտ կամ զվարճանքի վայր, ինչին մենք հաճախ ենք ականատես լինում, վերականգնվում է Աստծո տունը՝ մեր ժողովրդի համար սուրբ եւ նվիրական հաստատություն: Այս իմաստով անհասկանալի է, որ աշխարհում առաջինը քրիստոնեությունը պետական կրոն ընդունած երկրի ժողովուրդի մի հատված մերժում է աղոթավայրի վերականգնումը՝ նախընտրելով չգործող կինոթատրոնը:

Եթե խորհրդային տարիներին ժողովրդին որեւէ մեկը չէր պարտադրում քանդել եկեղեցիները, այլ դա իրականացվում էր պետության անմիջական նախաձեռնությամբ, ապա այսօր որեւէ մեկը չի արգելում վերականգնել այդ եկեղեցիները: Ստացվում է, որ պարտադրանքի ու հալածանքի պարագային մենք հեշտությամբ հրաժարվում ենք մեր հոգեւոր արժեքներից, իսկ ազատորեն ընտրելու հնարավորության դեպքում՝ եկեղեցու փոխարեն ընտրում ենք կինոթատրոնը:

Երկրորդ՝ հասարակությունը հաճախ է սիրում ընդվզել յուրաքանչյուր նորարարության դեմ եւ կրկնել, որ անհրաժեշտ է պահպանել մեր հնամենի հուշարձանները եւ հայկական ճարտարապետության արմատները: Պահպանել նշանակում է նաեւ հնարավորության պարագային կորցրածը վերականգնել: Սուրբ Պողոս-Պետրոս եկեղեցու կառուցումով վերականգնվում է այն, ինչը նախկինում ստիպված ենք եղել կորցնել: Եվ եթե ամառային կինոթատրոնն ընդամենը 60-ականների կառույց է, ապա Սուրբ Պողոս-Պետրոս եկեղեցու հիմքերը գալիս են 7-րդ դարից:

Կարծում ենք՝ ժամանակային այս տարբերությունը միանգամայն ակնառու է, եւ եթե մենք նախանձախնդիր ենք մեր նախնյաց արժեքներին եւ ավանդույթներին, մեր հայրերի կերտած մշակութային հուշարձաններին, ապա աներկբա պետք է նախապատվությունը տանք ոչ թե կինոթատրոնին, այլ եկեղեցուն:

Երբ եկեղեցին քանդվում էր, որեւէ մեկը ուշադրություն չդարձրեց հասարակական կարծիքին, այսօր, սակայն, խոսվում է կինոթատրոնի քանդման եւ եկեղեցու կառուցման հարցը հանրային քննարկման դնելու անհրաժեշտության մասին: Ի՞նչ կասեն օտարները, երբ տեսնեն, որ եկեղեցու կառուցման համար առաջին քրիստոնյա ժողովուրդը հանրաքվե է անցկացնում:

Միջազգային հանրության առջեւ հաճախ ենք բարձրաձայնում մեր ոտնահարված իրավունքների, մեր փլուզված եկեղեցիների եւ ոչնչացված խաչքարերի մասին՝ պահանջելով խաչ կանգնեցնել հայկական եկեղեցու գմբեթին: Իսկ ինչ ենք անում մենք՝ մեր իսկ սեփական հողում: Չգործող կինոթատրոնը գերադասում ենք եկեղեցուց եւ, մերժելով եկեղեցու կառուցումը, եւս մեկ անգամ հաստատում ենք խորհրդային շրջանի եկեղեցահալած քաղաքականությունը: Եթե մենք ինքներս չենք հետապնդում մեր հոգեւոր արժեքների եւ ճարտարապետական կոթողների վերականգնումը, ապա ինչ իրավունքով ենք դա պահանջում օտարներից:

Եթե մարդը կինոթատրոն չգնա, ապա մեծ կորուստ չի ունենա, առավել եւս, երբ այդ կինոթատրոնը չի գործում, սակայն եթե եկեղեցի չգնա, ապա հոգին կկորցնի: Անկախ ամեն ինչից, նախկինում այդ վայրում եղե՞լ է եկեղեցի թե ոչ, անընդունելի է մերժել աղոթավայրի կառուցումը: Անկարելի է եւ ոչ քրիստոնեավայել՝ որեւէ կառույց համեմատել եկեղեցու հետ, մի հաստատություն, որտեղ Աստված է բնակվում: Անկախ նրանից՝ Սուրբ Պողոս-Պետրոս եկեղեցին ժամանակին ճարտարապետական արժեք ներկայացրել է, թե ոչ, առաջին հերթին Աստծո տունն է եղել, որը սուրբ է եւ նվիրական յուրաքանչյուր քրիստոնյայի համար: Քրիստոնեական հուշարձանը նախ եւ առաջ հոգեւոր արժեք է եւ հետո նաեւ՝ մշակութային:

Եկեղեցու կառուցումը սուրբ եւ նվիրական գործ է, իսկ անցյալում ոչնչացված եկեղեցու վերականգնումը՝ սրբազան տուրք է նախնյաց հանդեպ եւ արժեքավոր ավանդ՝ եկող սերունդներին:

Եվ վերջապես, չգործող ամառային կինոթատրոնի քանդումով ոչինչ չի կորի, իսկ եկեղեցու կառուցումով կվերականգնվեն անցյալի ոտնահարված ճշմարտությունը եւ Աստծո տունը:

**Տ. ՊԱՐԳԵՎ ԱԲԵՂԱ ԲԱՐՍԵՂՅԱՆ**
**Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան**

## Մխիթար Գոշ-890

# Հիշողությունը սերում է գործերից

Վերնագիրը Եղիշե Չարենցի ձեւակերպումն է՝ «...Հիշատակը ձեր անցած օրերի արձագանքն է ու ցոլքը, ո՞վ հեռացնողներ»:

Ինչքա՞ն ենք քայլում մեր մեծամեծների անցած ոտնահետքերով՝ դրանք տրորո՞ւմ ենք, թե՞ մեր համաչափ քայլերով ավելի հաստատուն ու անցանելի դարձնում: Այս մտածումը ածանցյալ բազում այլ հարցեր է առաջադրում, որոնց պատասխանները, ավաղ, միշտ չէ, որ հստակորեն ստացվում են: Այդ բացը լրացնելու քայլեր է անում նորերս ստեղծված «Իրավաբանների համահայկական խորհրդաժողով» հասարակական կազմակերպությունը: Սա ինչ-որ յուրատեսակ մասնակի աջակցությո՞ւն է կառավարությանը, որը ազգային արժեքների պահպանության գործում դժվարությունների առջեւ է կանգնած, գուցե նաեւ այն արդարացի մտայնությո՞ւնն է, թե՝ յուրաքանչյուրս մեր հնարավորությունների սահմաններում աջակից լինենք այդ խնդիրների լուծմանը: Երկու դեպքում էլ ազնիվ մտայնություն է: Հիշյալ խորհրդաժողով ստեղծելու գաղափարը ձեւավորվեց «Հայ իրավական միտքը եւ 21-րդ դարի մարտահրավերները» խորագրով անցյալ տարվա սեպտեմբերի 19-20-ը Երեւանում անցկացված Իրավաբանների համահայկական առաջին համաժողովում, որը ձեւավորեց Իրավաբանական համահայկական ընկերակցության խորհուրդ, որի անդամներից 13-ը ընտրվեց Հայաստանից, 3-ը՝ Լեռնային Ղարաբաղից, 27-ը՝ սփյուռքից: Խորհրդի աշխատանքների համակարգող ընտրվեց համաժողով գումարելու մտահղացման հեղինակ ու կազմակերպիչներից մեկը՝ ՀՀ սահմանադրական դատարանի նախագահի, իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր Գագիկ Հարությունյանը: Անշուշտ, խորհրդի առաջին քայլը պիտի լիներ նոր ծրագրերի մշակումն ու դրանց հետեւողական իրականացումը՝ նախ աշխատանքները համակարգող մի մարմին ձեւավորելով: Ստեղծվեց «Իրավաբանների համահայկական խորհրդաժողով» հասարակական կազմակերպությունը (խորհրդի աշխատանքները համակարգող նախագահ՝ Գ. Հարությունյան), որն այս տարվա ընթացքում իրականացվելիք կոնկրետ ծրագրեր մշակեց՝ Հայաստանից խորհրդաժողովի անդամների պարբերական հավաքներով եւ սփյուռքի անդամների հետ էլեկտրոնային փոստով հաղորդվելով ու ընդհանուր համաձայնության գալով:

Նորաստեղծ խորհրդաժողովի աշխատանքների մասին գրելու առիթներ դեռ շատ կլինեն, այսօր անդրադառնում ենք բազում ծրագրերից միայն մեկին. այն առնչվում է հայ գիտնական, օրենսգիր, առակագիր, մանկավարժ, հասարակական գործիչ Մխիթար Գոշին, ում ծննդյան 890-ամյակն է լրանում այս տարի:

### Մեր անցյալի օրենսգիրների հիշատակը խնկարկումի կարոտ

Անցյալի օրենսգիրներ ասելով, հիմնականում նկատի ունենք հայր եւ որդի Շահամիր եւ Հակոբ Շահամիրյաններին եւ Մխիթար Գոշին: Առաջինները մոտ երեք հարյուր տարի առաջ հեռավոր Կալկաթայում գրեցին «Որոգայթ փառաց»-ը՝ ապագա անկախ Հայաստանի Հանրապետության սահմանադրությունը:

Շահամիրյանների աճյունը հեռավոր Կալկաթայում է՝ մեր հաճախակի այցելություններին ոչ այնքան հասու: Մխիթար Գոշի պարագայում այլ է վիճակը՝ մեծ օրենսգիրը («Դատաստանագիրք») եւ առակագիրը թաղված է Գոշավանքում: Թվում է, թե մեծերի պանթեոնում լինելու արժան այդ անհատի ժառանգությանը համակ ուշադրություն պիտի դարձնի հայրենի կառավարությունը, սակայն Մխիթար Գոշի դամբարանի ներկա անմխիթար վիճակն այսօր խոր մտահոգության տեղիք է տալիս:

«Իրավաբանների համահայկական խորհրդաժողով» ՀԿ-ն այս տարվա իր առաջին նիստում խնդիր դրեց հիմնովին զբաղվել Մխիթար Գոշի դամբարանի նորոգչական աշխատանքներով: Բացված է հաշվեհամար, որին Սահմանադրական իրավունքի կենտրոնն է արդեն փոխանցել մեկ միլիոն դրամ, նույնքան՝ Հայաստանի իրավաբանների միությունը: Այդ գործին օգտակար լինելու ցանկություն են հայտնել մի քանի բարերարներ: Խորհրդաժողովի աշխատանքները համակարգող նախագահն արդեն այդ հարցը քննարկել է Մայր աթոռի ճարտարապետական ծառայության ներկայացուցիչների, ՀՀ մշակույթի նախարարի հետ:

Այս խնդիրը Գագիկ Հարությունյանին շատ ավելի վաղ էր անհանգստացնում: Երբ Իրավաբանների համահայկական առաջին համաժողովի պատվիրակների մեջ ես տեսա Հարությունյանի անհատական հրավերով համաժողովին մասնակցող, Չեխիայի սահմանադրական դատարանի անդամ, իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր Ստանիսլավ Բալիկին, ում արտահերթ զեկուցումն էր նախատեսված «Միջնադարյան հայ իրավունքը եւ դրա ուսուցանումը Չեխիայում» թեմայով, ինձ համար պարզ էր, որ Մխիթար Գոշի անձի հանդեպ վերջինիս ուշադրությունն արդեն ձեւավորվել եւ ծրագիր է դառնում: Չեխիայի համալսարանի պրոֆեսոր Ստանիսլավ Բալիկը սահմանադրական իրավունքի պատմության դասագրքի հեղինակն է, եւ նրա այդ գրքի, որը դասավանդման ձեռնարկ է Չեխիայի բուհերում, մի ամբողջ գլուխ նվիրված է Մխիթար Գոշին: Մտահղացումը ծրագիր դառնալու ճանապարհի մի հատվածն էլ Համաժողովի հարյուրից ավելի պատվիրակների առաջնորդելն էր Գոշավանք, ուր Մխիթար Գոշի դամբարանն է՝ կիսափուլ եւ անմխիթար վիճակում:

Զուգահեռենք այս փաստը հեռավոր տարիների մի իրադարձության հետ: Զաքարե եւ Իվանե Զաքարյանների հովանավորությամբ ու օգնությամբ Տանձուտա ձորում Կիլիկիայից վերադարձած Մխիթար Գոշը կառուցում է Նոր Գետիկ վանքը եւ հանգրվանում այնտեղ: Այդտեղ էլ խոր ծերության հասակում, 1213 թվականին (ծնվել է 1120-ին) ավարտվում է միջնադարի հայ մեծ մտածողի երկրային կյանքը: Նրա աճյունն ամփոփվում է Գետիկում, որն իր անունով կոչվում է Գոշավանք:

Զուգահեռենք ու վերադառնանք մեր օրերը: Երբ Իրավաբանների համահայկական առաջին համաժողովի պատվիրակները վերադարձան Գոշավանք կատարած այցելությունից, մի տարսամ տրամադրություն էր պատել նրանց: Մխիթար Գոշի դամբարանի այդ անմխիթար վիճակը ներկայացնելու արդարացի որեւէ բացատրություն չկա, եւ այցելուների, մասնավորապես Ստանիսլավ Բալիկի ներկայությունն ու վերջինիս զարմանքը մտահոգիչ էին: Այն, ինչ նա ներկայացնում է իր հայրենի Չեխիայում՝ կապված Մխիթար Գոշի հետ, հարգանք ու խոնարհում է առաջացնում հայ մեծ օրենսգրի կյանքն ու թողած ժառանգությունը Չեխիայում իրենց մայրենի լեզվով ուսումնասիրողների մեջ, եւ աներեւակայելի է նրանց համար, որ դեռ միջնադարում այդչափ վաստակ ու հեղինակություն ունեցող անհատն այսօր մի տեսակ օտարված է իր հայրենակիցներից: Վկան՝ ահա այս անուշադրությունը: Ստանիսլավ Բալիկի այս անխոս մտորումը մասնակիցներից ով ինչպես ընկալեց, չգիտեմ, բայց որ Գագիկ Հարությունյանի համար այդ պահից շատ որոշակի ձեւավորվեցին առաջիկա կոնկրետ, շոշափելի անելիքները, դա հստակ է: Ահա եւ արդյունքը՝ նախաձեռնությունը մարմին է առնում: Եվ մեր հայրենի կառավարությունը, որ զբոսաշրջության զարգացման հայեցակետ է մշակել, պիտի շատ ուրախ լինի, որ հասարակական մի կազմակերպություն ահա այս կարգի աջակցությամբ է հանդես գալիս:

Հ.Գ. Լրագրողի միամիտ պատկերացմամբ, տեսնում եմ նորոգված դամբարանը, ուզում եմ տեսնել նաեւ դամբարան այցելող մեր օրերի բազում դատավորների, որոնք դամբարանի մուտքին թե հարակից պատին կկարդան Մխիթար Գոշի տողերը՝ մեծ տառերով փորագրված. «Դատավորը պետք է լինի՝ փորձառու, կրթված, իմաստուն, արդարամիտ, իմացող, բարի, համբերատար, անկիրք, բարեկամ, անկաշառ մարդ»: Տա Աստված, որ հարյուրամյակների հեռվից այս խոսքերը լսելի դառնան:

**ՀՈՎՀԱՆՆԵՍ ՊԱՊԻԿՅԱՆ**

# Մերկելի այցը Թուրքիա՝ Բեռլինին խուլուհամր է դարձնում

Մարտի 29-30-ին Անգելա Մերկելն առաջին անգամ կայցելի Թուրքիա: Դրանից Թուրքիան մեծ ակնկալիքներ ունի. առաջին հերթին իր՝ ԵՄ երկրներ ճամփորդող քաղաքացիների համար առավել բարվոք այցագրային պայմաններ ապահովել: Վիզայի վերացման թեման կարեւորագույններից է լինելու ԳԴՀ կանցլերի հետ հանդիպումներում, իրազեկում է գերմանական «Թիրոլեր թագեսցայթունգը», այնուհետեւ փոխանցելով, թե Թուրքիան արդեն բավական ժամանակ է արտաքին հարաբերություններում գլխավորում է իր քաղաքացիների տեղաշարժի առավել պարզեցված պայմանները՝ ակնկալելով հավասար պայմաններ ԵՄ անդամակցության ձգտող մյուս երկրների հետ: Մոտ 60 երկիր Թուրքիայից վիզա էլ չեն պահանջում, եւ Թուրքիան հենց ԵՄ երկրներից նույնն է ակնկալում: Վերջերս Անկարան Իսպանիայի հետ է նման պայմանավորվածություն ձեռք բերել:

Գերմանիայի կանցլերը լինելու է Անկարայում եւ Ստամբուլում, հանդիպելու է վարչապետ Էրդողանին եւ նախագահ Գյուլին: Զրույցի թեման լինելու են Թուրքիայի ԵՄ անդամակցության համար 2005-ից սկսված բանակցությունները, ինչպես նաեւ Կիպրոսի խնդիրը, Թուրքիա-Հայաստան հարաբերությունները, Աֆղանստանում, Մերձավոր Արեւելքում իրադրությունը, հարեւան Իրանի հետ «ատոմային» վեճը: Բանակցությունների առանցքում լինելու են նաեւ տնտեսական հարցեր, Մերկելի պատվիրակության կազմում մեծ է գործարարների թիվը: ԳԴՀ կանցլերը կհանդիպի հույն ուղղափառ պատրիարք Բարդուղիմեոս Առաջինի, կրոնական այլ փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ: Այցի շրջանակներում նախատեսվում է Ստամբուլում գերմանա- թուրքական համալսարանի հիմնարկեքի արարողությունը:

Գերմանիան հատուկ խնամք է դրսեւորում Թուրքիայի հետ իր կապերն ամրացնելու առումով: Միգուցե առաջիկա այցն է պատճառը, որ Էրդողանի՝ հայերին արտաքսելու աղմկահարույց արտահայտությունը գերմանական թերթերի եւ կայքէջերի տաք քննարկման առարկա դառնալուց բացի, գերմանացի օրենսդիրների եւ կառավարական շրջանակների բանավոր դժգոհությանը գրավոր տեսք չի տալիս:

Մարտի 9-ին ԳԴՀ արտգործնախարարության պետնախարար Կոռնելիա Փիփերը եւ Թուրքիայի մշակույթի եւ տուրիզմի նախարար Էրթուգրուլ Գյունայը գերմանա-թուրքական թարգմանական մրցանակ են հիմնել: ԳԴՀ արտգործնախարարության մամլո ծառայության փոխանցմամբ՝ 2010 թվականին այն առաջին անգամ կտրվի գերմանական գրականությունը թուրքերեն եւ համապատասխանաբար՝ թուրքական գրականությունը գերմաներեն լավագույն ներկայացնողին: Թարգմանական մրցանակը 2006-ին կյանքի կոչված երկու ժողովուրդների մշակութային երկխոսության, ըմբռնողության Էռնս Ռոյթեր նախաձեռնության մաս է կազմում: Դրա շրջանակներում արդեն հայտնի են արվեստի, երիտասարդության, մշակույթի, մեդիայի, գիտության, ինտեգրման մի շարք հաջող ձեռնարկներ, օրինակ՝ Բեռլինի Հումբոլդ եւ Անկարայի Մերձավոր Արեւելքի համալսարանների համատեղ ծրագրերը կամ գերմանա-թուրքական երիտասարդական Jungenc նվագախումբը:

**ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ**
Գերմանիա

ԻՐԱՔԻ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐ

# «Մենք ցանկանում ենք խոսել միասնական ձայնով»

*Հայտարարել են եկեղեցականները Իրաքում*

Լրագրող **Միշել Վյուն** Բաղդադից «Քրիսչըն փոստ» թերթում գրում է, որ փետրվարի 9-ին Իրաքում գործող քրիստոնյա եկեղեցիների առաջնորդները հավաքվել են հայկական Սբ Կարապետ վանքում՝ սկզբնավորելու մի նոր խորհրդի գործունեությունը: «Իրաքի քրիստոնեական եկեղեցիների առաջնորդների խորհուրդը» (ԻՔԵԱԽ) ներառում է 1982-ից երկրում գրանցված 14 քրիստոնյա համայնքների (ուղղափառ, կաթոլիկական, առաքելական եւ բողոքական) պատրիարքներին, արքեպիսկոպոսներին եւ եկեղեցու առաջնորդներին: Նպատակն է «միավորել գաղափարները, դիրքորոշումները եւ որոշումները, որոնք միտված են պահպանելու եւ հզորացնելու քրիստոնեական ներկայությունը երկրում եւ խթանելու համագործակցությունը միմյանց հետ առանց միջամտելու անձնական գործերին»: Առաջնորդներն ընդգծել են, որ իրենք նաեւ ցանկանում են երկխոսություն ծավալել իրենց մահմեդական քույրերի եւ եղբայրների հետ եւ հանդուրժողական մթնոլորտ ստեղծել միմյանց միջեւ:

Խորհուրդը մտադիր է նաեւ քննարկել քրիստոնեական դաստիարակության խնդիրները երկրում, եւ դպրոցներում ընդգրկել նորացված ուսումնական ծրագրեր:

«Իրաքի քրիստոնյաները երբեք իրենց սոսկ փոքրամասնական համայնք չեն համարել: Նրանք խոր արմատներ են ունեցել Իրաքի պատմության եւ քաղաքակրթության մեջ», նշել է այս առթիվ եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար դոկտ. Օլաֆ Ֆիքսե Թվեյտը:

Քաղկեդոնացի ասորիները, որոնք քրիստոնյա ազգաբնակչության մեծամասնությունն են կազմում, հաճախ են նշում, որ իրենց պատմությունը հետ է գնում դեպի Բաբելոնյան ժամանակները: Վերջին շրջանում, սակայն, քրիստոնյաները բռնությունների թիրախ են դարձել: Սպանություններն անպակաս են եւ քրիստոնյաները ստիպված հեռանում են երկրից: Ներկայումս քրիստոնյաների ընդհանուր թիվը 600 հազար է՝ համեմատած 2003-ի 1,2 միլիոնի հետ:

«Դժվար է նման իրավիճակում ապրելը: Ամենուրեք խուճապ է, տանը, դպրոցում, աշխատավայրում: Մարդիկ հանգիստ չունեն, չգիտեն ինչ կպատահի իրենց հետ հաջորդ րոպեին», ասել է քաղդեացիների արքեպիսկոպոս Էմիլ Շիմուն Նոնան:

Նորաստեղծ խորհրդի անդամները հույս են հայտնել, որ այս նոր զարգացումը կարեւոր փուլ կլինի ինչպես եկեղեցիների, այնպես էլ Իրաքի՝ որպես ինքնավար պետության ապագայի համար:

Հաղորդագրությունը արտատպել է «Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթը, որտեղից թարգմանաբար քաղել ենք տեղեկությունը:

Հ. Ծ.

# Խամենեին ԱՄՆ-ին մեղադրեց հակաիրանական դավադրության մեջ

*«Չենք սեղմի կարծեցյալ «բարեկամության ձեռքը»*



Իրանական Նոր տարվա տոնակատարությանը նվիրված հեռուստաելույթում Իրանի հոգեւոր առաջնորդ այաթոլլահ Ալի Խամենեին հերթական անգամ ԱՄՆ-ին մեղադրել է իր երկրի դեմ դավադրություն նյութելու մեջ:

Նախօրեին ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման հատկապես իրանցիների համար տեսագրված ամանորյա ուղերձում հայտարարել էր, որ Թեհրանի հետ երկխոսություն սկսելու վերաբերյալ ավելի վաղ Վաշինգտոնի արած առաջարկությունը մնում է ուժի մեջ:

BBC-ն նշում է, որ հոգեւոր առաջնորդի ելույթում Օբամայի ուղերձը ուղղակիորեն չի հիշատակվել: Այդուհանդերձ Խամենեին խոսել է ԱՄՆ-ի «բարեկամական նախերգանքների» մասին, որոնք, ինչպես ինքն է ասել, չեն համապատասխանում ամերիկացիների իրական դիտավորություններին: Այաթոլլահի ելույթի այդ մասը չի վրիպել միջազգային մեկնաբանների ուշադրությունից: Հատկապես խիստ է հնչում Ալի Խամենեի հետեւյալ արտահայտությունը. «Մենք չենք սեղմի այն մարդկանց կարծեցյալ «բարեկամության ձեռքը», ովքեր դա մեկնելով՝ գրպանում դանակ են պահում»:

Այաթոլլահ Խամենեի խոսքերով, «հարկ չկա, որ ԱՄՆ ղեկավարությունը խոսի խաղաղության ու բարեկամության մասին՝ միաժամանակ դավադրություն նյութելով եւ խռովության դրդելով»: Իրանցի առաջնորդն անթույլատրելի է համարում, որ ԱՄՆ նախագահը խռովարարներին եւ վնասագործներին անվանում է «իրավապաշտպան կազմակերպությունների ակտիվիստներ»:

Ավելի վաղ ԱՄՆ-ը Իրանի իշխանություններին քննադատել էր ընդդիմության բողոքի զանգվածային ելույթների ճնշման համար, որոնց մասնակիցները պահանջում էին վերանայել անցյալ տարվա նախագահական ընտրությունների արդյունքները:

Տեսագրված ելույթում Բարաք Օբաման հայտարարել էր, որ Իրանի կառավարությունն ինքնամեկուսացման ուղի է բռնել, այդուհանդերձ ԱՄՆ-ը առաջվա պես ուզում է, որ իրանցիների հանդեպ ցուցաբերվի արդարացի եւ հարգալից վերաբերմունք:

Իրանական Նոր տարվա առթիվ իր առաջին ուղերձը Օբաման հղել էր 2009-ի մարտին: Վերջին տասնամյակների ընթացքում Օբաման ԱՄՆ առաջին նախագահն է, որն անմիջականորեն դիմում է Իրանի ժողովրդին եւ կառավարությանը՝ առաջարկելով «նոր էջ բացել ամերիկա-իրանական հարաբերություններում»:

# Օբամայի առաջին մեծ հաղթանակը

*Ներկայացուցիչների պալատը ընդունեց առողջապահության բարեփոխման օրինագիծը*

**ԱՄՆ Կոնգրեսի ստորին պալատը կիրակի ուշ երեկոյան հավանություն է տվել առողջապահության ազգային համակարգի բարեփոխման օրինագծին: Ներկայիս վարչակազմի համար շատ կարեւոր փաստաթղթի քննարկման նպատակով կոնգրեսականները հատուկ նիստի էին հավաքվել հանգստյան օրը, նշում է ԻՏԱՌ-ՏԱՍՍ գործակալությունը:**

**Ներկայացուցիչների պալատում քվեարկությունը տեղի է ունեցել տեղական ժամանակով ժամը 23-ին, երբ արեւելյան կիսագնդում արդեն երկուշաբթի էր: Փաստաթուղթն ընդունվել է 219 «թեր» եւ 212 «դեմ» ձայներով, այսինքն ընդդիմությունը շատ ուժեղ է եղել:**

**Նախագահ Բարաք Օբաման կոնգրեսականների որոշումը բնութագրել է որպես «Ամերիկայի հաղթանակ»: Հատուկ հայտարարությամբ հանդես գալով՝ Օբաման ընդգծել է, որ օրենսդիրները «պատասխանեցին պատմության կոչին»:**

**Մնում է, որ փաստաթուղթը վավերացվի նախագահ Բարաք Օբամայի ստորագրությամբ: CNN հեռուստաընկերությունը նշում է, որ նախագահ Օբամայի նախաձեռնած առողջապահության բարեփոխման օրինագծի ընդունման համար վճռական դեր խաղացին Դեմոկրատական կուսակցության այն ներկայացուցիչների քվեները, որոնք հանդես են գալիս ընդդեմ վիժեցումների: Հղիության արհեստական ընդհատման հակառակորդներին հնարավոր եղավ օրինագծի կողմնակիցներ դարձնել, երբ Սպիտակ տունը հայտարարություն տարածեց, որ առողջապահությանը հատկացվող պետական միջոցները չեն ծախսվի վիժեցումների իրականացման համար:**

**Կայացած քվեարկության շնորհիվ վերջին 40 տարում ամենամեծ փոփոխությունները կկատարվեն ամերիկյան առողջապահության ոլորտում: Վերափոխումների շրջանակներում նախատեսվում է 10 տարվա ընթացքում առողջապահությանը հատկացնել 940 մլրդ դոլար: Դրա շնորհիվ բուժապահովագրության համակարգում կընդգրկվեն այն 32 մլն ամերիկացիները, որոնք առայժմ չունեն նման ապահովագրություն:**

**Ապահովագրական ընկերություններն այսուհետեւ չեն կարողանա երեխաների բուժապահովագրությունը մերժել հիվանդության պատմության հիման վրա:**

**Բացի դրանից, նախնական գնահատումների համաձայն, բարեփոխումների իրականացումը թույլ կտա տասը տարում պետբյուջեի պակասորդը կրճատել 138 մլրդ դոլարով:**

**Ենթադրվում է, որ հիշյալ եւ մյուս հիմնական փոփոխությունները կիրականացվեն մինչեւ 2014 թվականը: Այդ ժամանակ բուժապահովագրության համակարգում ընդգրկված կլինի ամերիկացիների 95 տոկոսը՝ ներկայիս 83 տոկոսի դիմաց:**

**Կոնգրեսում կիրակի օրը կայացած քվեարկության արդյունքները չափազանց մեծ կարեւորություն ունեն նախագահ Օբամայի համար: Առողջապահության համակարգի բարեփոխումը, ըստ էության, դարձավ Օբամայի վարչակազմի անկյունաքարերից մեկը եւ նախագահի առաջին մեծ հաղթանակը:**

# Շոտլանդական բանկից 10 մլն դոլար կորզած ռուս համակարգչահեններր ձերբակալվեցին

Ռուսաստանի իրավապահ մարմինները ձերբակալել են մի քանի անձանց, որոնք կասկածվում են Royal Bank of Scotland-ի վճարային համակարգի վրա էլեկտրոնային գրոհների կազմակերպման մեջ: Դրանց հետեւանքով շոտլանդական բանկը կորցրել է մոտ 10 մլն դոլար:

Մասնավորապես ՌԴ ԱԴԾ-ն ձերբակալել է հանցախմբի ենթադրյալ առաջնորդին՝ Սանկտ Պետերբուրգում ծնված Վիկտոր Պլեշչուկին: Այդ մասին հաղորդում է Լոնդոնի «Ֆայնենշըլ թայմս» թերթը: ԱԴԾ-ն ամերիկյան ՀԴԲ-ին խնդրել էր ձերբակալություններին առնչվող լուրերը գաղտնի պահել մյուս կասկածյալներին չխրտնեցնելու համար, նշում է Ինտերֆաքս գործակալությունը: Երկու գերատեսչությունները, ինչպես նաեւ ԱՄՆ արդարադատության նախարարությունն առայժմ ձեռնպահ են մնում մեկնաբանություններից:

Կիբեռնետիկական անվտանգության գծով փորձագետ Դոն Ջեկսոնը կարծում է, որ RBS բանկի վրա կատարված էլեկտրոնային գրոհներից հետո Ռուսաստանի եւ ԱՄՆ-ի իշխանությունների համագործակցության նոր փուլ է սկսվել միջազգային համակարգչահենային խմբավորումների դեմ մղվող պայքարում: «Ֆայնենշըլ թայմսը» հիշեցնում է, որ նման հանցագործություններ կատարած ՌԴ քաղաքացիներն անցյալում հաճախ մնում էին անպատիժ:

Պլեշչուկի հանցակիցների մեջ կան Մոլդովայի եւ Էստոնիայի քաղաքացիներ: 2008-ի աշնանը նրանք կարողացել էին հայթայթել RBS բանկի WorldPay համակարգի հաճախորդների հաշիվների տվյալները, ապա տարբեր երկրների բանկոմատներից կեղծ պլաստիկ քարտերով հանել էին 9,4 մլն դոլար: Մասնագետները պնդում են, որ տեխնիկապես դա շատ բարդ գործողություն է, համակարգչահենները կարողացել էին մեծացնել այն հաշիվների լիմիտները, որոնցից փող էր հանվում:

Ավելի վաղ Էստոնիայի ոստիկանությունը ձերբակալել էր չորս կասկածյալների: Հրապարակվել էր նրանցից մեկի՝ տալլինցի Սերգեյ Ցուրիկովի անունը:

Royal Bank of Scotland-ը Մեծ Բրիտանիայի խոշորագույն բանկերից մեկն է:

# Նովրուզը՝ վրացական տոն

**Վրաստանի նախագահ Միխեիլ Սաակաշվիլին կիրակի՝ մարտի 21-ին Վրաստանի ադրբեջանցիներին շնորհավորել է մուսուլմանական Նովրուզ տոնի կապակցությամբ՝ տեղեկացնելով, որ այսուհետեւ այն Վրաստանում հռչակվում է համազգային տոն:**

**Վրացական եւ ադրբեջանական լրատվամիջոցների տեղեկացմամբ, Սաակաշվիլին, Մառնեուլում տեղի ունեցած հանդիպմանը դիմելով ադրբեջանցիներին, հայտարարել է. «Դուք մեր արյունն ու միսն եք, մեր կարեւորագույն մասը, մենք ձեզ շատ սիրում ենք»:**

**Նովրուզը վրացական մյուս տոների նման, ըստ Սաակաշվիլու, կտոնեն այսուհետեւ, իսկ մինչ այդ ադրբեջանցի ուսանողների համար Վրաստանը լավ պայմաններ է խոստանում վրացական բուհերում ուսանելու համար:** Ա. Հ.

AZG NEW PDF.qxd 22/03/2010 22:30 Page 1



# «Հայկական համերգը կամ թուրքական ասացվածքը»

«Արմնոն» միջազգային թատերական փառատոնի մեխը հանդիսացավ անվանի ու հանրաճանաչ դերասան, բեմադրիչ Սերժ Ավետիքյանի «Էսոնե» թատրոնի (Ֆրանսիա) «Հայկական համերգը կամ թուրքական ասացվածքը» մոնոներկայացումը: Այս տարի, երբ նշվում է Հայոց մեծ եղեռնի 95-ամյա տարելիցը, երկու ֆրանսահայ արվեստագետներ ազգասերներ **Սերժ Ավետիքյանը** եւ կոմպոզիտոր **Ժիրայր Թորիկյանը** ստեղծել են ուշագրավ մի գործ՝ Ժիրայր Թորիկյանի պիեսի հիման վրա՝ «Հայկական համերգ կամ թուրքական ասացվածք» մոնոներկայացումը, որի միակ դերակատարը հենց Ժ. Թորիկյանն է: Պիեսի հիմքում թուրքական ասացվածքն է. «Հային մի խոսեցրու, բառերը հերիք չեն անի...»: Պիեսը հայազգի մի կոմպոզիտորի մասին է, ով պատրաստվում է առաջիկա համերգին ներկայացնել «Ոդիսականից» ներշնչված իր նոր ստեղծագործությունը: «Անցյալի հետ խաղաղ ապրելու համար պետք է ծիծաղես նրա վրա», ահա այս կարգախոսով Ժիրայր Թորիկյանն այս ներկայացման մեջ փորձել է պատասխանել իրեն հուզող հարցերին, որոնց թվում են՝ ինչպե՞ս է անցյալի ողբերգությունն ազդում մեզ վրա, ինչպիսի՞ն կլինեի ես՝ եթե պատմությունն այլ կերպ դասավորվեր, ի՞նչ կարծիքի եք մոռանալու, ուղղվելու եւ ներվելու մասին... Եվ ահա ֆրանսահայ երկու հայտնի արվեստագետների համատեղ այս ներկայացումը հայ-թուրքական խաղաղ հաշտեցման յուրահատուկ կոչ է: Ե՛վ բեմադրիչը, և՛ կոմպոզիտոր-դերասանը փաստերն այնպես են ներկայացրել, որ հանդիսատեսը ակամայից վերապրում է պիեսի հերոսի տատի ու պապի գաղթի տառապանքները, կիսում նրանց դաժան ճակատագիրը՝ մինչեւ Ֆրանսիա:

Ժամանակները փոխվում են, քաղաքականությունը՝ նույնպես, եւ հարկ է, որ մշակութային քաղաքականությամբ նաեւ անդրադարձ արվի մի անմեղ ժողովրդի դեմ կատարված ոճրագործությանը: Ահա հենց դա էր պիեսի հիմքում: Ժիրայր Թորիկյանն իր հրաշալի ու վարակիչ խաղով հմայեց հանդիսատեսին: Հետաքրքրական ռեժիսորական լուծումներով, նորամուծությամբ էկրանին պատկերվող դրվագներով բեմադրիչ Սերժ Ավետիքյանը կարողացել էր մի քանի դետալներով ու դեկորներով ամբողջական պատկերացում տալ պիեսի հիմքում եղած նյութին, դրան գումարելով երաժշտությունը, գույնը եւ լույսը:



Հրաշալի մի գործ, որը շատ ավելին կարող է ասել, քան հազարավոր գրքեր ու հոդվածները: Ի դեպ, այս մոնոներկայացումն արդեն փայլուն հաջողություն է ունեցել Թուրքիայում, տեղեկացրեց Սերժ Ավետիքյանը, որի հետ հարցազրույցը կներկայացնենք առաջիկայում:

Հարցրեցի Երեւանի թատրոնի եւ կինոյի պետ. ինստիտուտի պրոֆեսոր **Ռաֆայել Զրբաշյանի** կարծիքը, թե ինչպիսի՞ տպավորություն է ստացել ներկայացումից: «Ինձ ամենաշատը հետաքրքրել էր, թե ինչպիսի վերաբերմունք ունեն ֆրանսացիները Եղեռնի նկատմամբ: Չնայած ես ապրել եմ Ֆրանսիայում, ծանոթ եմ նրանց դիրքորոշմանը, միեւնույն է, ինձ շատ հետաքրքրել է, թե բեմում ինչպես են ներկայացնելու: Եկա, տեսա ու հասկացա, որ այս գործը շատ մեծ ազդեցություն կունենա: Եվ եթե նման գործերը շատ լինեն, ավելի նպաստավոր կլինի, ավելի մեծ տպավորություն կթողնի իրական փաստերի շուրջը: Կարծում եմ, որ հայկական գաղթօջախներին պետք է ուղղություն տանք նման գործեր ստեղծելու, մասնագետներ ուղարկենք նրանց օգնելու համար: Հետաքրքրական էր, որ արմատներով հայ, բայց Ֆրանսիայում ծնված կոմպոզիտորի հոգում հայ ոգին էր ու բողոքը: Իսկ ռեժիսորական հնարքները, որ ոչ թե դաշնամուր են հեսները «քաշ տալիս», այլ միայն ստեղնաշար, որի վրա հրաշալի «նվագում» էր Թորիկյան կոմպոզիտոր-դերասանը, շատ տպավորիչ է»:

Ի դեպ, մոնոներկայացումը հաջորդ օրը ցուցադրվեց, այս անգամ Ֆրանկոֆոնիայի շրջանակներում, որին ներկա էին ՀՀ-ում հավատարմագրված շատ դեսպաններ ու հյուրեր:

Երեկ, «Արմնոնի» հյուրերը այցելեցին Ցեղասպանության թանգարան, հուշահամալիր եւ լռությամբ հարգեցին 1915-ի զոհերի հիշատակը:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

# Բնապահպանական կինոդիտումների «Կանաչ ակումբ»

**Անցած տարի Երեւանում անցկացված «Արեւորդի» բնապահպանական փառատոնի ծրագրի մի մեծ մաս կազմում էին այս թեմաներով տեղական եւ արտերկրյա ֆիլմերի ցուցադրություններ մայրաքաղաքի տարբեր կինոթատրոններում եւ մշակութային օջախներում: Այս ֆիլմերը բնապահպանական ամենաակտուալ խնդիրներ էին շոշափում (ջրային, հանքային ռեսուրսներ, կլիմայի փոփոխություն, մթնոլորտային աղտոտում, ֆլորայի եւ ֆաունայի պահպանում եւ այլն):**

**Յան Բերտրանի «Տունը» ֆիլմը, որով բացվեց փառատոնը, շքեղ կինոպատում էր մարդկության բնօրրանի՝ մոլորակի մասին, ծով բնության գեղեցկություններին եւ մոլորակին սպառնացող վերահաս վտանգի ճիչ, ահազանգ:**

**Փառատոնի մթնոլորտը շուրջ մեկ շաբաթ վարակել էր քաղաքային կյանքը: Բայց բնապահպանությունը ամենօրյա խնդիր ու մտահոգություն է, եւ ուրախալի է Երեւանում բնապահպանական կինոդիտումների «Կանաչ ակումբի» բացման լուրը, որը համաշխարհային կանաչ շարժման շարունակությունն է, եւ որի նախաձեռնությունը «Արեւորդի» միջազգային փառատոնին է պատկանում:**

**«Կանաչ ակումբը» գործելու է Թումանյան 40 հասցեում, ամեն շաբաթ ժամը 16.30-ին կազմակերպելու է հայ եւ օտարազգի հանրահայտ ռեժիսորների բնապահպանական ֆիլմերի դիտումներ, որին հետեւելու են թեմատիկ քննարկումներ, հայկական ֆիլմերի ցուցադրություններին ներկա կլինեն նաեւ ֆիլմի հեղինակներ:**

**«Արեւորդի» փառատոնը, ինչպես տեղեկացնում է մեզ ուղղված գրությունը, ստեղծել է բնապահպանական ֆիլմերի հարուստ տեսադարան, թե՛ հիմնադրամի թողարկած, թե՛ փառատոնին ներկայացված ֆիլմերով: Դրանց հանրային ցուցադրությունների նպատակը բնապահպանական համախոհների ակումբ ձեւավորելն է, այսօրվա ակտուալ բնապահպանական խնդիրների մտահոգություններով, սպասվելիք համապատասխան առաջարկներով:**

Մ. Բ.

# Արդյո՞ք կարեւոր է գրաբարի իմացությունը, երբ այդ լեզուն կենդանի է միայն եկեղեցական ծեսերում

**Այսօր գրաբարի ուսուցումը կարծես շատ արդիական թեմա չէ, սակայն փաստերը ցույց են տալիս, որ մեր հասարակությունը մեծապես հետաքրքրված է գրաբարի իմացությամբ: 2009թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին «Ծիրանի» ՀԿ-ն կազմակերպել էր գրաբարի անվճար դասընթացներ: Մասնակիցների քանակը (70 ուսանող) եւ հետաքրքրվածության աստիճանը բավականին բարձր էր, այդ իսկ պատճառով ներկայումս «Ծիրանին» պատրաստվում է ուսուցման հաջորդ փուլին, որն իր մեծությամբ գերազանցելու է առաջինին:**

**Իսկ ինչի՞ համար են մարդիկ սովորում գրաբար: Այս հարցը ըստ մեր հետազոտության ունի մի քանի պատասխան: Առաջինն այն է, որ մարդիկ ցանկանում են հասկանալ եկեղեցական ծեսը, երկրորդը՝ մարդիկ ցանկանում են գրաբարի իմացությամբ խոսել գրագետ հայերենով (արեւելահայերեն) եւ երրորդ՝ շատերը գրաբարի մեջ տեսնում են ինքնություն եւ դասընթացը դիտարկում, մի տեսակ, ճամփորդություն դեպի ազգային ինքնություն, դեպի ինքնաճանաչում:**

**Շատ ուրախալի կլիներ, եթե գրաբարը հանրակրթական դպրոցներում դասավանդվեր, որպես կանոնավոր առարկա: Կարծում ենք որ այս առումով այսօր գոյություն ունի հասարակական մեծ պահանջ, որովհետեւ երիտասարդության կրթված մի մեծ զանգված այլեւս չի ցանկանում իր ինքնությանը վերաբերող իրողությունները տեսնել որպես վերացական եւ անհասանելի երեւույթներ:**

ՆԱՐԵԿ ԱՇՈՒՂԱԹՈՅԱՆ
«Ծիրանի» ՀԿ

ԳՈՒՅԺ

# Վախճանվել է Վալենտինա Տոլկունովան



**Մոսկվայում կյանքի 64-րդ տարում մահացել է հանրահայտ երգչուհի Վալենտինա Տոլկունովան: ՌԻԱ գործակալության տվյալներով, նա ուներ ուռուցքային հիվանդություն: Բելառուսի Մոգիլյով քաղաքում փետրվարի 16-ի համերգից հետո նրան տարել էին հիվանդանոց, ապա տեղափոխել Մոսկվայի Բոտկինի անվան հիվանդանոց:**

**Վալենտինա Տոլկունովան ծնվել էր 1946 թ. հուլիսի 12-ին Արմավիր քաղաքում: 1966-ին սկսել էր երգել Յուրի Սաուլսկու ջազային նվագախմբում: Հինգ տարի անց ավարտել էր Գնեսինների անվան երաժշտական ուսումնարանը: Համբավի արժանացել էր Սյունազարդ դահլիճում 1972 թ. ունեցած ելույթից հետո:**

**1973-ից «Մոսկոնցերտի» մեներգչուհի էր: 1989-ին «Մոսկոնցերտի» բազայի վրա ստեղծվեց АРТ ստեղծագործական միավորումը, որի գեղարվեստական ղեկավարը դարձավ Տոլկունովան: 1987-ին նրան շնորհվեց ՌԽՖՍՀ ժողովրդական արտիստուհու կոչում:**

**Խորհրդային մի շարք երգահան-կոմպոզիտորների հետ աշխատած Տոլկունովային համաժողովրդական սերը էր արժանացրել բազմաթիվ քնարական երգերի անզուգական կատարումը:**

Պ. Ք.

# Վախճանվել է Վոլֆգանգ Վագները



Կիրակի՝ մարտի 21-ին Բայրոյթում մահկանացուն է կնքել Բայրոյթի փառատոնի՝ ավելի քան կեսդարյա ղեկավար 90-ամյա Վոլգանգ Վագները: Նա ողջ կյանքը նվիրել էր իր մեծ հոր՝ Ռիխարդ Վագների ժառանգությանը: 1951-ից սկզբում եղբոր՝ Վիլանդի, այնուհետեւ մինչեւ 2008-ը միանձնյա ղեկավարած տոնը համարվում է աշխարհում ամենաերկար պաշտոնավարում ստանձնած ղեկավարը: 2008-ից Բայրոյթի փառատոնը ղեկավարում են նրա դուստրերը՝ Կատարինան եւ Եվան:

Վոլֆգանգ Վագների վաստակը գնահատողներն առանձնահատուկ շեշտում են ավանդույթներին հավատարիմ մնալու եւ նորարարության միջեւ կամուրջ կառուցելու նրա պատրաստակամության մասին: Փառատոնային «Կանաչ բլրի» վրա նա ղեկավարել է ավելի քան 1700 ներկայացում, հեղինակել 12 բեմադրություն:

2009-ի նոյեմբերին Բավարիայի վարչապետ Հորստ Զեեհոֆերից ի նշան երախտագիտության Աստղով եւ ժապավենով Վաստակի մեծ խաչ պարգեւին է արժանացել, որ Գերմանիայում 2-րդ կարեւոր պարգեւն է եւ հազվադեպ է տրվում: «Դուք Բայրոյթի փառատոնը բարձրացրիք՝ համաշխարհային բեմ դարձնելով այն», ընդգծել էր Բավարիայի վարչապետը:

Գերմանիայի Դաշնային Հանրապետության նախագահ Հորստ Քյոհլերը գնահատել է Վոլֆգանգ Վագներին՝ իբրեւ Գերմանիայի մշակութային կյանքի խոշոր անհատականություններից մեկը:

Ան. Հ.
Գերմանիա

# Ի պաշտպանություն «Մոսկվա» կինոթատրոնի բացօթյա սրահի

Սփյուռքում ձեւավորված մտավորականների ու արվեստագետների **«Տեսնել»** համախումբը, որի մասին տեղեկացանք **«Ազգին»** ուղղված գրությունից, 24 անդամների ստորագրությամբ դիմել է ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանին եւ Գարեգին Բ կաթողիկոսին՝ կասեցնելու «Մոսկվա» կինոթատրոնի բացօթյա սրահի քանդման եւ Ս. Պողոս-Պետրոս եկեղեցու վերաբացման ծրագիրը:

Դրվատանքով հանդերձ հետանկախության շրջանում մեր երկրի հոգեւոր կյանքի աշխուժացումը, ի մասնավորի եկեղեցաշինության գործունեությունը, նրանք նկատում են, որ փոխարենը արվեստն ու մշակութային հաստատությունները՝ թանգարաններից մինչեւ «երբեմնի յարգուած պալէ» (նկատի է առնվում օպերային թատրոնը) մատնված են անկումի: Եվ հարց են բարձրացնում, թե արդյոք գումարների չափազանցված հատկացում չի՞ արվում եկեղեցաշինության, «փոխանակ զարկ տալու մշակութային աշխարհի հաստատութիւններու շինութեան եւ գեղարուեստական կեանքին»:

Համամիտ այն կարծիքին, որ եկեղեցաշինությունն ու եկեղեցու վերանորոգությունը Հայաստանի հանդեպ զբոսաշրջության հետաքրքրություն կարող են առաջացնել, սատարելով Հայաստանում կրոնական ինքնության վերականգնման գործընթացները, նրանք նշում են, որ հայ ինքնության եւ ժառանգության խճանկարի մեջ կարեւոր մշակութային հաստատությունները ստվերում են մնացել, ուստի իրենք խրախուսում են մշակույթի այդպիսի հաստատությունների պահպանումն ու զարգացումը, որով «Հայաստանը կդառնայ գործօն մասնակից աշխարհի մշակութային բեմին:

**Մայր Աթոռին կոչ կ՚ընենք անփոփոխ ձգելու կինօ «Մոսկուայի» բացօթեայ թատերասրահը: Վստահ ենք, որ եկեղեցիներու վերականգնումը ցարդ հովանաւորող անդրազգային մշակութային ընտանին կրնայ առաջարկել աւելի յարմար լուծում մը, քան ներկայ աշխարհիկ (գեղարուեստական ու կրօնական) զբօսաշրջային միջեւ կտրուկ հակադրութիւնը: Պատմութիւնը յիշելու անհրաժեշտութիւնը եւ ապագան կերտող հաստատութիւնները խթանելու անհրաժեշտութիւնը պէտք չէ, որ զիրար բացառող ըլլան»:**

Մ. Բ.

AZG NEW PDF.qxd 22/03/2010 21:52 Page 1



# «Միկան» պատրաստ է նոր մրցաշրջանին



ՖՈՏՈԼՈՒՐ

Նոր մրցաշրջանի շեմին երեկ «Միկա» ակումբում տեղի ունեցավ թիմի գլխավոր մարզիչ **Արմեն Ադամյանի** հանդիպումը լրագրողների հետ, որի ընթացքում ներկայացվեցին թիմի նորեկները:

Արմեն Ադամյանը նշեց, որ «Միկան» բավական լրջորեն է նախապատրաստվել նոր մրցաշրջանին՝ անցկացնելով ուսումնամարզական հագեցած հավաքներ արտերկրում: Դրանք հնարավորություն տվեցին թիմի մարզիչներին կողմնորոշվելու ֆուտբոլիստների խաղային ունակությունների հարցում: Առաջին հավաքի ժամանակ անցկացրած ստուգողական հանդիպումները հնարավորություն ընձեռեցին փորձարկելու թիմի նորեկներին: Այդ հանդիպումներում մարզիչները հնարավորություն տվեցին բոլոր ֆուտբոլիստներին էլ խաղային պրակտիկա ձեռք բերել: Երկրորդ հավաքի ժամանակ արդեն ուրվագծվեց թիմի հիմնական կորիզը: «Միկան» ընդհանուր առմամբ ստուգողական 11 հանդիպում անցկացրեց: Մարզիչներն այնպես էին արել, որ ծանրաբեռնվածությունը ֆուտբոլիստների վրա հավասարաչափ բաշխվի: Այնպես որ մտավախություն չկա, որ ֆուտբոլիստները մրցաշրջանի շեմին հոգնած կլինեն:

Արմեն Ադամյանը նշեց, որ վերջին տարիներին «Միկան» առաջադիմել է ու հաջող մրցելույթներ է ունեցել, ուստի այս մրցաշրջանում էլ պայքարելու է բարձր տեղերի համար: Իսկ դրա համար յուրաքանչյուր խաղ դիտարկելու են որպես մրցաշրջանի գլխավոր հանդիպում եւ ամենայն լրջությամբ են մոտենալու դրան: «Կիլիկիայի» հետ գավաթի խաղարկության առաջին խաղում էլ Ադամյանը թիմերի հաղթելու հնարավորությունները հավասար է գնահատում: Ըստ նրա, հաջողության կհասնի այն թիմը, որը կկարողանա ավելի շատ թոթափել մեկնարկային հուզմունքը:

Գլխավոր մարզիչը նաեւ նշեց, որ թեեւ դժվար էր թիմի փորձառու մի քանի ֆուտբոլիստներից հրաժարվելը, սակայն հարկավոր է մտածել հերթափոխի մասին ու խաղալու հնարավորություն ընձեռել երիտասարդներին: Ինչ վերաբերում է 37-ամյա վրացի դարպասապահ Սոսո Գրիշիկաշվիլուն, ապա նա դեռ պայմանագիր ունի «Միկայի» հետ եւ հայտավորված է թիմում, սակայն տրանսֆերի է հանված:

Այնուհետեւ ներկայացվեցին «Միկայի» նորեկներ, դարպասապահ Սաուլիուս Կլեւինսկասը, կիսապաշտպան Էդիլսոն Ժունիորը, հարձակվող Մինդաուգաս Գրիգալեւիչյուսը եւ պաշտպան Հրայր Մկոյանը: Իհարկե, վերջինիս բոլորն են ճանաչում եւ ներկայացնելու առանձնակի հարկ չկա:

Լիտվացի դարպասապահ Սաուլիուս Կլեւինսկասը 26 տարեկան է, 2004-2009-ին հանդես է եկել «Սուդուվա» թիմում, որի կազմում դարձել է Լիտվայի փոխչեմպիոն ու 3-րդ մրցանակակիր, երկրի կրկնակի գավաթակիր ու սուպերգավաթակիր: Նա Լիտվայի առաջնությունում 101 խաղ է անցկացրել, մեկ անգամ հանդես է եկել երկրի ազգային հավաքականում:

Լիտվացի է նաեւ 29-ամյա հարձակվող Մինդաուգաս Գրիգալեւիչյուսը: Ֆուտբոլիստի իր կարիերան նա հիմնականում անցկացրել է լիտվական թիմերում՝ «Արդենայում», «Պոլոնիայում», «Ժալգիրիսում», «Վիկասում», «Շիլուտեում», «Կաունասում» եւ «Վետրայում»: 2004-ին նա հանդես է եկել Ֆարերների «ՎԲ Վագարում»: Լիտվայի առաջնությունում Գրիգալեւիչյուսն անցկացրել է 197 խաղ, խփել է 72 գոլ: Երկրի ազգային հավաքականում 2 խաղ է անցկացրել: 2007-ին նա «Կաունասի» կազմում նվաճել է երկրի չեմպիոնի տիտղոսը, դարձել է Լիտվայի գավաթակիր: Մինչ այդ նա 2003-ին գավաթակիր էր դարձել «Ժալգիրիսում»: 2008-ին «Կաունասում», 2009-ին՝ «Վետրայում» Գրիգալեւիչյուսն արժանացել է արծաթե մեդալի:

23-ամյա բրազիլացի Էդիլսոն Ժունիորը հանդես է եկել տեղի ակումբներում՝ «Ատլետիկո Մինեյրոյում», «Էսպորտ Դեմոկրատայում» եւ «Ռեգատա Բրազիլում»: Նա Մինեյրոյի եռակի չեմպիոն է: Երեք լեգեոնականներն էլ «Միկայի» հետ պայմանագիր են կնքել մինչեւ դեկտեմբերի 1-ը: Իսկ Հրայր Մկոյանի պայմանագրի ժամկետն ավարտվում է 2011-ի դեկտեմբերի 1-ին:

# Կլիչկոն մենամարտն ավարտեց նոկաուտով



Գերծանր քաշային կարգում WBO-ի եւ IBF-ի վարկածներով աշխարհի ներկայիս չեմպիոն Վլադիմիր Կլիչկոն հաջողությամբ պաշտպանեց իր տիտղոսները: Դյուսելդորֆում կայացած մենամարտի վերջին վայրկյաններին նա նոկաուտի ենթարկեց ամերիկացի բռնցքամարտիկ Էդդի Չեմբերսին:

Ամբողջ մենամարտի ընթացքում Կլիչկոն առավելություն ուներ եւ իր կամքն էր թելադրում մրցակցին: Արդեն 2-րդ ռաունդում Կլիչկոն մրցակցին նոկդաունի ենթարկեց: Գնալով նրա առավելությունն ակնհայտ էր դառնում, հարվածների թիվն էլ աճում էր: Չեմբերսը փորձում էր պաշտպանվել, ինչը նրան այնքան էլ չէր հաջողվում: 7-րդ ռաունդում Չեմբերսը վնասեց հոնքը՝ ավելի ծանրացնելով իր վիճակը: Հանգուցալուծումը տեղի ունեցավ 12-րդ ռաունդում: Մենամարտի ավարտից մի քանի վայրկյան առաջ Կլիչկոն ձախից ուժգին հարվածով Չեմբերսին գետնին տապալեց: Հարվածն այնքան ուժգին էր, որ ամերիկացին բավական ժամանակ չէր կարողանում ոտքի կանգնել: Նրան տեղափոխեցին հիվանդանոց:

«Շատ ուրախ եմ, որ հաջողվեց հաղթել նոկաուտով: Այլապես շատ տխուր մենամարտ կստացվեր: Չեմբերսին չհաջողվեց այդպես էլ ինձ դիպուկ հարվածել: Չնայած դրան, մենամարտն ինձ համար հեշտ չընթացավ: Հնարավոր է, որ ձգտում էի ամեն ինչ անել, ինչպես հարկն է: Ամերիկացին շատ արագաշարժ բռնցքամարտիկ է: Ճիշտ է, նա հուժկու հարվածների չի տիրապետում, սակայն եթե հոգնեի, կարող էր հաղթել: Ինձ թվաց, թե Չեմբերսը հոգեբանորեն զիջեց 6-րդ ռաունդից հետո: Շատ դժվար է դիպուկ հարվածել մի բռնցքամարտիկի, ով պասիվ մարտ է վարում եւ մտածում է միայն նոկաուտից խուսափելու մասին: Խոստացել էի նոկաուտով հաղթել, ուստի 12-րդ ռաունդում բոլոր ուժերս ներդրեցի խոստումս կատարելու համար», մենամարտից հետո նշել է Վլադիմիր Կլիչկոն:

«Գիտեի, որ նա տիրապետում է հուժկու հարվածների, սակայն այդպես էլ չկարողացա դիմագրավել մրցակցիս: Ես հասկացա, թե ինչ մարտավարություն է ընտրել եւ փորձում էի թույլ չտալ, որպեսզի դա նրան հաջողություն բերի: Իսկ նոկաուտի պահը չեմ հիշում», նշել է Չեմբերսը:

ՖՈՒՏԲՈԼ

# Մեկնարկում է ՀՀ գավաթի մրցաշարը

«Փյունիկ»-«Իմպուլս», «Գանձասար»-«Ուլիս» հանդիպումներով այսօր մեկնարկում է ֆուտբոլի Հայաստանի գավաթի 19-րդ խաղարկությունը: Հաջորդ օրը կկայանան «Միկա»-«Կիլիկիա», «Շիրակ»-«Բանանց» հանդիպումները: Խաղերը կսկսվեն ժամը 15-ին:

«Փյունիկը» մրցակցին հյուրընկալելու է «Հանրապետական» մարզադաշտում: Թեեւ չեմպիոնի մրցակիցը բարձրագույն խմբի նորեկն է, սակայն «Փյունիկին» բնավ էլ հեշտ խաղ չի սպասում:

«Գանձասարն» ու «Ուլիսը» գավաթի նախորդ խաղարկությունում էլ զույգեր էին կազմել քառորդ եզրափակիչում: Հաջողությունն ուղեկցել էր «Ուլիսին», որն առաջին անգամ մտել էր կիսաեզրափակիչ:

# Երրորդը չորս թիմերի մրցավեճում

Հանդբոլի Հայաստանի կանանց հավաքականը Իսրայելում անցկացված «Չելենջ տրոֆի» միջազգային մրցաշարում 4 թիմերի մրցավեճում զբաղեցրեց 3-րդ տեղը: Ֆրանսահայ խաղացողներով համալրված մեր հավաքականն առաջին խաղում ընդամենը մեկ միավորի տարբերությամբ (27-28) զիջեց Կիպրոսի ընտրանուն: Հաջորդ խաղում մեր թիմի մրցակիցը Իսրայելի հավաքականն էր, որի հետ մրցավեճում հայ մարզուհիները պարտվեցին խոշոր՝ 9-32 հաշվով: Ավարտական խաղում Հայաստանի հավաքականը 21-12 հաշվով հաղթեց Մալթայի ընտրանուն:

Պարտության պատճառներից մեկը մեր հավաքականի մարզիչները պայմանավորում են նրանով, որ մրցաշարին չմասնակցեց թիմի հիմնական դարպասապահ, ֆրանսահայ Մարի Գազզանչյանը: Նա թեեւ Հայաստանի քաղաքացիություն ունի, սակայն հանդբոլի միջազգային ֆեդերացիան չթույլատրեց Մարիին խաղալ Իսրայելում: Ըստ գործող կարգի, Մարին պետք է նախորդ 3 տարիներին հանդես եկած չլիներ Ֆրանսիայի հավաքականում: Իսկ նա վերջին անգամ Ֆրանսիայի երիտասարդական հավաքականում ելույթ էր ունեցել 2 տարի 11 ամիս 18 օր առաջ:

Փաստորեն, 12 օրվա պատճառով Մարին զրկվեց ՀՀ հավաքականի դարպասը պաշտպանելու հնարավորությունից: Նրա փոխարեն այդ պարտականությունը կատարեց 16-ամյա Նելլի Ֆիդանյանը:

# Արոնյանին չի հաջողվում կարգավորել խաղը



Շախմատի «Ամբեր» մրցաշարում Լեւոն Արոնյանին ոչ մի կերպ չի հաջողվում կարգավորել խաղն ու ընդգրկվել առաջատարների շարքում: 6-րդ տուրում նա 1,5-0,5 հաշվով պարտության մատնեց ադրբեջանցի Վուղար Հաշիմովին՝ հաղթելով «կույր» շախմատի պարտիայում: Հաջորդ տուրում Լեւոնի մրցակիցն առաջատարների խմբում գտնվող Վլադիմիր Կրամնիկն էր: Մրցակիցները մեկական հաղթանակ տոնեցին: Արոնյանին հաջողությունն ուղեկցեց արագ շախմատի պարտիայում: Իսկ 8-րդ տուրում Բորիս Գելֆանդի հետ 2 պարտիաներն էլ ավարտվեցին ոչ-ոքի:

Այսպիսով, 8 տուրից հետո Արոնյանը 7 միավորով 9-րդ տեղում է: 9-րդ տուրում Լեւոնը կհանդիպի Ռուսլան Պոնոմարյովի հետ: Աղյուսակը 11 միավորով գլխավորում է Վասիլի Իվանչուկը, որը 1,5-0,5 հաշվով հաղթեց Ալեքսանդր Գրիշչուկին եւ մեկական միավոր վաստակեց Ռուսլան Պոնոմարյովի եւ Լենիեր Դոմինգեսի հետ պարտիաներում:

Առաջատարին մեկ միավոր է զիջում Մագնուս Կառլսենը: Նորվեգացի գրոսմայստերը նախ 2-0 հաշվով առավելության հասավ Բորիս Գելֆանդի նկատմամբ, ապա միեւնույն արդյունքով (0,5-1,5) զիջեց Վուղար Հաշիմովին ու Վլադիմիր Կրամնիկին: Վերջինս Գելֆանդի հետ ունի 9,5 միավոր: 9-ական միավոր են վաստակել Գրիշչուկն ու Կարյակինը:

«Կույր» շախմատի մրցաշարում առայժմ բոլորից հաջող է խաղում Ալեքսանդր Գրիշչուկը, որն ունի 6 միավոր: 5-ական միավոր են վաստակել Կառլսենն ու Իվանչուկը: Արոնյանի օգտին 3 միավոր է գրանցված:

Արագ շախմատի պարտիաներում լավագույնը Իվանչուկի արդյունքն է՝ 6 միավոր: Կառլսենը, Գելֆանդը եւ Կրամնիկը վաստակել են 5-ական միավոր: Արոնյանն ունի 4 միավոր:

# 50 հազար դոլար ռեկորդի համար

Կիսամարաթոնյան վազքի աշխարհի քառակի չեմպիոն Զերսենայ Տադեսեն Լիսաբոնում անցկացված մրցումներում աշխարհի նոր ռեկորդ սահմանեց՝ մրցատարածությունը հաղթահարելով 58 րոպե 23 վրկ-ում: Դա 10 վրկ-ով գերազանցում է Սամյուել Վանժիրուի նախկին ռեկորդը: Համաշխարհային ռեկորդի սահմանման համար Տադեսեն 50 հազար դոլար պարգեւավճար ստացավ:

Կանանց մրցավեճում հաղթող ճանաչվեց քենիացի Ռենինա Արուսեին (1 ժամ 8 րոպե 38 վրկ), որն առաջ անցավ եթովպացի Ասկալե Տաֆայից եւ օլիմպիական չեմպիոնուհի, պորտուգալացի Ֆեռնանդու Ռիբեյրոյից:

# Ողբերգական վազքարշավ

Ողբերգական ավարտ ունեցան Քենիայի Նիերի քաղաքում անցկացված 5000 մետր վազքի մրցումները: Վերջնագիծը հատելուց հետո քենիացի Պետեր Իսաբոկե Մոգերեն սառը հյութ ըմպեց ու կորցրեց գիտակցությունը: Նրան անմիջապես հիվանդանոց տեղափոխեցին, սակայն բժիշկներին չհաջողվեց փրկել մարզիկի կյանքը:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**
**«Հայկական ակնաբուժության նախագիծ»**
**բարեգործական հիմնադրամ**
**2009թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

1. Հիմնադրամի լրիվ անվանումը` «ՀԱՅԿԱԿԱՆ ԱԿՆԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻԾ » ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

2.Հիմնադրամը գրանցված է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 264.160.05889 13.08.2002թ.,պետական գրանցման վկայական 03 Ա 055637:

3.Հիմնադրամի գտնվելու վայրը` ք. Երեւան, Այգեստան փ.5,տ.7,հեռ . (010)559068

7. Իրականացված ծրագրերը` Լույս հայի աչքերին բարեգործական ծրագիր

(ա) կանխարգելում/հետազոտություն/բուժում/վիրահատություն/ակնոցների տրամադրում: ՀԱՆ-ի գործունեության արդյունքում 2009թ. ընթացքում ՀՀ Կոտայքի, Տավուշի, Լոռու, Շիրակի մարզերում եւ Երեւանում ակնային ընդհանուր հետազոտություն են անցել 21709 մարդ, որոնցից վիրահասվել է 1131, ստացել են լազերային բուժում 489 Աչքի ճարժական հիվանդանոցում, դուրս է գրվել եւ բաժանվել է 6766 ակնոց: Դպրոցներում ակնաբույժների հասցեական հետազոտությունների արդյունքում ստուգվել է 4745 աշակերտ:

(բ) մասնագիտական վերապատրաստում/դասընթացներ` վերապատրաստվել են 19 ակնաբույժներ, 37 ակնաբուժական բուժքույրեր, 148 ընտանեկան բժիշկներ եւ 89 դպրոցների եւ բուժակ-մանկաբարձական կետերի բուժքույրեր

(գ) հանրային իրազեկություն/տեղեկատվություն/կրթություն` բնակչությանն են բաժանվել 10000-ից ավել կրթական բրոշյուրներ աչքի հիվանդությունների եւ աչքի խնամքի վերաբերյալ:

8. Ֆինանսավորման աղբյուրներն են հանդիսացել հետեւյալ նվիրատվությունները`

«Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական ընկերություն, ԱՄՆ- 92 216 հազար դրամ

Մեծ Բրիտանիայի դեսպանատուն -2 220 հազար դրամ

Վալեքս խումբ -184 հազար դրամ

անհատական նվիրատվություններ Մարիոթ հյուրանոցի միջոցառման արդյունքում - 70 հազար դրամ

«Հայաստանի Երեխաներ» ԲՀ - 50 հազար դրամ

9. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը` 217 857 հազար դրամ

10. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը` 217 857 հազար դրամ

11. Կից ներկայացնում ենք «Բեյքեր-Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի իրականացրած աուդիտորական եզրակացությունը:

Հաստատված է

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱԿՆԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻԾ »

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ-ի հոգաբարձուների խորհրդի 2010թ. մարտի 19-ի թիվ 02-2010 որոշմամբ:




**ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

«Հայկական ակնաբուժության նախագիծ»
Բարեգործական Հիմնադրամի տնօրենին

Մենք անկախ աուդիտի ենք ենթարկել «Հայկական ակնաբուժության նախագիծ» Բարեգործական Հիմնադրամի 31 դեկտեմբեր 2009 թ.` դրությամբ տարեկան հաշվապահական հաշվեկշիռը, ինչպես նաեւ հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների եւ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները: Այս ֆինանսական հաշվետվությունների կազմման համար պատասխանատու է «Հայկական ակնաբուժության նախագիծ» Բարեգործական Հիմնադրամի ղեկավարությունը: Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում կարծիք արտահայտել ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի ստանդարտներին եւ գործնական փորձին համապատասխան: Համաձայն այդ ստանդարտների պահանջվում է, որ մենք աուդիտը նախագծենք եւ իրականացնենք` ֆինանսական հաշվետվությունները էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով: Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տվյալների եւ բացահայտումների բաղադրիչների հետազոտումը` թեստային հիմունքներով: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաեւ ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների, ընկերության ղեկավարության կողմից իրականացվող կառավարման եւ ֆինանսական հաշվետվությունների ներկայացման գնահատումը: Մենք գտնում ենք, որ իրականացված աուդիտորական աշխատանքների ընթացքում հավաքագրվել են բավարար եւ իրական տեղեկություններ, որոնց արդյունքները հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ**

Մեր կարծիքով, 2009 թ. տարեկան հաշվապահական հաշվեկշիռը, ինչպես նաեւ հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների եւ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները բոլոր էական առումներով արժանահավատ են եւ տալիս են ճշմարիտ ու իրական պատկերը «Հայկական ակնաբուժության նախագիծ» Բարեգործական Հիմնադրամի ֆինանսական վիճակի մասին, իսկ հաշվապահական հաշվառումը Հիմնադրամում վարվում է «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:

Փոխ. տնօրեն
Աուդիտոր
Խ. Բեգլարյան




## Ինչպե՞ս կարելի է դիմել ԵՄ հայտամրցույթներին Հայաստանում

**Հայաստանում եվրոպական միության ( Ժողովրդավարության եւ մարդու իրավունքների եվրոպական գործիք եւ ոչ-պետական կազմակերպությունների / տեղական ինքնակառավարման մարմինների (EIDHR եւ NSA/LA)) եւ Գրանդ Թորնտոնի համատեղ տեղեկատվական սեմինար**

Հայաստանում եվրոպական միությունը հրավիրում է ՀԿ ներկայացուցիչներին, տեղական եւ հանրային կառավարման մարմիններին, որոնք հետաքրքրված են ԵՄ դրամաշնորհների ստացման եւ մասնավորապես 2010թ. մարտի 22-ին հրապարակված **EIDHR հայտերի մրցույթին** մասնակցություն ցուցաբերելու գործում, ներկա գտնվել **2010թ. ապրիլի 2-ին** կայանալիք տեղեկատվական սեմինարին: Քննարկող թեմաներն են.

09:00 13:00 - ԵՄ ծրագրային փուլերի կառավարում

14:00 17:30 **Տեղեկատվության տրամադրում EIDHR -ի** եւ ընդհանուր առմամբ այն մասին, թե ինչպես դիմել Հայաստանում ԵՄ կողմից հայտարարված հայտերի ներկայացման մրցույթներին:

Ցանկացողները պետք է գրանցվել ողջ սեմինարի համար` էլ. փոստի հաղորդագրություն ուղարկելով Սոնա Նահապետյանին **sona.nahapetyan@ec.europa.eu:** Մասնակցությունը սեմինարին հնարավոր է միայն գրանցման դեպքում: Դիմումների ընդունման վերջնաժամկետն է **2010թ. մարտի 29-ը:**

## How to apply for EU Calls for Proposals in Armenia?

**Information Seminar organised by The Delegation of the European Union to Armenia (EIDHR and DCI-NSA/LA programmes) and Grant Thornton**

The Delegation of the European Union to Armenia would like to invite all **NGOs, Local Authorities and Public Administrations** interested in applying for **EU grants** and specifically for the EIDHR Call for Proposals published on 22/03/2010 to participate in an Information Seminar on **Friday 2nd April 2010.** It will cover the following topics: 09:00 to 13:00 -Introduction to EU Project Cycle Management and 14:00 to 17:30 - **EIDHR information session** and more generally How to apply for EU Calls for Proposals in Armenia. The applicants should register for the full day by sending an email to Sona Nahapetyan at:

**sona.nahapetyan@ec.europa.eu.** Only registered applicants will be admitted. The deadline for registration is **March 29, 2010.**

Ֆլորես Աճուրդի Տուն ՍՊԸ-ն Ակսոն ԱՀ Բորսայի հարթակում իրականացնելու է իրավունքով «Ամերիաբանկ» ՓԲԸ-ին պատկանող գույքի աճուրդային վաճառքը`

1. Հողամաս` 0.15 հա, նպատակային նշանակությունը` բնակավայրերի, օգտագործման նպատակը` հասարակական կառուցապատման: Հասցե` ք. Ծաղկաձոր, Նոր Շրջանցիկ ճանապարհին կից տարածք: Մեկնարկային գինը 38000000 դրամ:

Աճուրդի փուլերը` դասական, այնուհետեւ հոլանդական եղանակներով 26.04.2010թ-ից մինչեւ 30.12.2010թ. յուրաքանչյուր աշխատանքային օր ժ.13.00-ից, ք.Երեւան, Ազաթանգեղոսի 6/1 հասցեում: Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել` 56-45-13 կամ այցելել **www.akson.am** վեբ կայքը:

**Հայաստանի Կանաչների (սոցիալ-էկոլոգիական) կուսակցության 20 09թ. ֆինանսական հաշվետվություն**

| Մուտք | Ելք |
| --- | --- |
| 0 | 0 |

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**
**«ՋԱՎԱԽՔ»**
**բարեգործական հիմնադրամի**
**2009 թ. գործունեության մասին**

1. Հիմնադրամի լրիվ անվանումը` «ՋԱՎԱԽՔ» բարեգործական հիմնադրամ

2. Հիմնադրամը գրանցված է 09.04.2001 թ. ՀՀ արդարադատության նախարարության կողմից, պետական գրանցման վկայական` 209

3. Հիմնադրամի գտնվելու վայրը` ՀՀ, ք. Երեւան, Հանրապետության 47, հեռ. 58-06-06, 091-92-49-74

«ՋԱՎԱԽՔ» բարեգործական հիմնադրամը 2009 թ.-ին չի գործել, գույք չի օգտագործել, ծրագրեր չի իրականացրել, ֆինանսական հոսքեր չի ունեցել:

Հաստատված է հոգաբարձուների խորհրդի կողմից:

«ՋԱՎԱԽՔ»
բարեգործական
հիմնադրամի գործադիր
տնօրեն Վ. Թադեւոսյան




ՖԻՆԱՆՍՆԵՐ

# Մինչեւ տարեվերջ «Յունիբանկ»-ը վարկային պորտֆելը կհասցնի 90 մլրդ դրամի

Մինչեւ տարեվերջ «Յունիբանկ»-ը նախատեսում է իր վարկային պորտֆելը հասցնել մինչեւ 90 մլրդ դրամի` ապահովելով վարկային ներդրումների 35 տոկոսի աճ: Այս տարվա փետրվարի վերջի դրությամբ բանկի վարկային պորտֆելը կազմել է մոտ 66,5 մլրդ դրամ, որից 39 մլրդ 871 մլն դրամը` բիզնես-վարկերը:

Ինչպես եւ նախորդ տարիներին, 2010թ.-ին եւս «Յունիբանկ»-ը մեծ ուշադրություն կդարձնի ֆիզիկական անձանց վարկավորմանը` առաջարկելով նոր, շահավետ պայմաններով գարնանային ակցիաներ ինչպես հիփոթեքի, այնպես էլ ավտովարկավորման ոլորտներում: «Յունիբանկ»-ի հիփոթեքային վարկավորման ծավալները հաշվետու ժամանակահատվածում կազմել են մոտ 12 մլրդ, իսկ ավտովարկավորմանը` 8 մլրդ դրամ:

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ գրեթե կրկնակի ավելացել են բանկի պլաստիկ քարտերով վարկավորման ծավալները` փետրվարի վերջի դրությամբ կազմելով 2,2 մլրդ դրամ: Նշենք, որ «Յունիբանկ»-ն առաջարկում է տարբեր նշանակության վարկային քարտերի, այդ թվում` աշխատավարձային նախագծերի համար նախատեսված քարտերի լայն ընտրություն: «Յունիբանկ»-ի պլաստիկ քարտերի եւ այլ վարկերի պայմանների վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվություն կարելի է ստանալ զանգահարելով բանկի թեժ հեռախոսակապի կենտրոն` 85-80 հեռախոսահամարով կամ այցելելով բանկի 35 մասնաճյուղերից մեկը: Բանկի ծառայությունների վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է նաեւ բանկի կայքէջում` **www.unibank.am:**

**Ժողովրդավարության եւ մարդու իրավունքների եվրոպական գործիք (ԺՄԻԵԳ) Երկրի աջակցությանն ուղղված ծրագիր 2009/2010 Հայաստան**
**Հայտագրի համարը`**
**EuropeAid/129-805/L/ACT/AM**

**Եվրոպական հանձնաժողովը** ընդունում է ծրագրի առաջարկներ ուղղված քաղաքացիական հասարակության դերի ամրապնդմանը հետեւյալ բնագավառներում.` մարդու իրավունքների եւ ժողովրդավարական բարեփոխումների զարգացում, աջակցություն շահագրգիռ խմբերի համադաշնեցմանը եւ **Հայաստանում** քաղաքական մասնակցության եւ ներկայացման գործընթացի համախմբվածությանը: Ծրագիրը կիրականացվի ժողովրդավարության եւ մարդու իրավունքների եվրոպական գործիքի (ԺՄԻԵԳ) 2009/2010 տարեկան ազգային ծրագիր ֆինանսական աջակցությամբ:

Դիմումների լրացման համար անհրաժեշտ ուղեցույցների փաթեթը կարելի է գտնել հետեւյալ կայքէջում`

**https://webgate.ec.europa.eu/europeaid/online-services/index.cfm?do=publi.welcome&userlanguage=en**

Սեղմեք հայտագրի համարով «Որոնում» պատուհանը եւ ներմուծեք «129208» մրցույթի համարը, այնուհետեւ սեղմեք «Որոնում» պատուհանը:

**Ծրագրի համառոտ նկարագրի ներկայացման վերջնաժամկետն է` Մայիսի 7-ը, ուրբաթ, 2010թ**

Այս հայտամրցույթի վերաբերյալ տեղեկատվական հանդիպումը տեղի կունենա ուրբաթ, **ապրիլի 2-ին, 2010 տեղեկատվական ժամանակով ժամը 14:00-ին**, Մարիոթ հյուրանոցի Տիգրան Մեծ դահլիճում: Ցանկացողները պետք է գրանցվեն` էլ. փոստի հաղորդագրություն ուղարկելով Սոնա Նահապետյանին **sona.nahapetyan@ec.europa.eu:** Մասնակցությունը սեմինարին հնարավոր է միայն գրանցման դեպքում: Դիմումների ընդունման վերջնաժամկետն է **2010թ. մարտի 29-ը**:

**Local publication for call for proposals: EIDHR Country-based support scheme 2009/2010 for ARMENIA**
**Publication reference:**
**EuropeAid/129-805/L/ACT/AM**

**The European Commission** is seeking proposals for strengthening the role of civil society in promoting human rights and democratic reform, in supporting the peaceful conciliation of group interests, and in consolidating political participation and representation **in Armenia**, with financial assistance from the European Instrument for Democracy and Human Rights (EIDHR), Annual Action Programme 2009/2010. The full Guidelines for Applicants are available for consultation at EuropeAid website:

**https://webgate.ec.europa.eu/europeaid/online-services/index.cfm?do=publi.welcome&userlanguage=en**

Click the "Search by Reference" Tab and type "129805" in the field "Reference", then click button "Search"

**The deadline for submission of Concept Notes is: Friday 7th May 2010**

An information session on this call for proposals will be held on **Friday 2nd April 2010 at 14:00** hours local time in the Tigran Mets hall of the Marriott hotel Yerevan. The applicants should register for the participation by sending an email to Sona Nahapetyan at: **sona.nahapetyan@ ec.europa.eu.** Only registered applicants will be admitted. The deadline for registration is **March 29, 2010.**

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ` 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող` «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը` 02 Ա N 047261, տրուած` 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ` 3000, ստորագրուած է տպագրութեան` 22.03.2010, գինը` 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում` Իսահակեան 28: